



**Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն**

**ԿԱՆԱՆՉ ՊԻՐՔԸ ԵՒ ՊԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՎԵՐԶՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅԺ

ՀՈՒՆԻ 2000

ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹՅՈՒՆ

1.	Մուտք.....	4
2.	Կնոջ ավանդական դերային ֆունկցիաներն ու դրանց փոփոխությունները մեր օրերում	7
3.	Կանանց պրոբլեմները եւ սոցիալ-հոգեբանական խորհրդատվությունը.....	14
4.	Գործազրկությունը որպես սոցիալական պրոբլեմ. ուսկի դործոններն ու կանայք որպես ուսկի խումբ	17
5.	Հասարակական կազմակերպությունները.....	21
6.	Կանանց վիճակի բարելավում, կանանց նկատմամբ խտրականության վերացում	24
7.	Կազմակերպված կյուր սեղանի եվ սեմինարի արդյունքների ամփոփում. առաջարկներ	27
8.	Ամփոփում	29
9.	Ծրագրի իրականացման ընթացքը. մոտեցումներ, դիտարկումներ.....	30
9.1.	Հարցաչարի կազմման աշխատանքները և ընթացքը	30
9.2.	Հարցումն իրականացնող խմբի կազմավորում և նախապատրաստում	30
9.3.	Հարցումն անցկացնելու նպատակային մոտեցումներ.....	30
9.4.	Հարցման ընթացքը.....	31
9.5.	Հարցվողների վերաբերմունքը կանանց հիմնահարցերին և հարցմանը	31
9.6.	Սոցիալական հարցման արդյունքների ամփոփումը	32
10.	Հավելվածներ	33
	Աղյուսակներ	34
	Գրաֆիկներ	62
	Հարցնողների նախապատրաստման սխեման.....	73
	Ծրագրի մասնակիցները	74

Սիրելի ընթերցողներ,

Գրեթե տաս տարի է, ինչ Հայաստանը ազատ և անկախ պետություն է: Սահմանադրությամբ Հայաստանն ամրագրել է իր հավատարմությունը ժողովրդավարությանը և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը: Անցած տարիներին Հայաստանն անցել է այն ճանապարհի մի մեծ հատվածը, որը տանում է դեպի ինտեգրացում եվրոպական կառույցներում: Արդ, ինչպես նաև գալիքում անհրաժեշտ է ամբողջությամբ կյանքի կոչել Սահմանադրությունը: Ասվածը ենթադրում է նաև, որ ի թիվս այլ նպատակների հարկ է կոնկրետ միջոցառումներով ապահովել հայ կանանց իրավահավասարությունը հասարակության մեջ:

Ներկայացվող ուսումնասիրությունը կարող է բացառիկ նպաստ բերել վերոնշյալ նպատակի իրականացմանը: Ուսումնասիրության հիմքը կազմող՝ «Կնոջ տեղն ու դերը հայ հասարակության մեջ» ծրագիրը ներառում է ինչպես ընդգրկուն ուսումնասիրություն ընտանիքում, մասնագիտական ոլորտում և հասարակության մեջ հայ կնոջ դրաված այսօրեական տեղի մասին, որը հիմնավորված է անցկացված հարցախույզերով, այնպես նաև կանանց ցանկությունները և պատկերացումներն իրենց տեղի և դերի մասին: Ելնելով առկա իրավիճակից՝ մշակված են նաև գործնական հանձնարարականներ, որոնք նպատակ ունեն բարելավել կանանց դրությունն ընդհանրապես, ինչպես նաև իսթանել նրանց իրավահավասար մասնակցությունը Հայաստանի քաղաքական, տնտեսական, ընկերական և մշակութային կյանքին: Ես համոզված եմ, որ Հայաստանը չի կարող անտեսել կանանց ներդրումը երկրի կյանքում, զանց առնել նրանց եռանդը և գաղափարները: Հենց Գյումրիում, ուր անցկացվել են հարցախույզերը, հայ կանայք երկրաշարժին հաջորդած ծանրագույն շրջանում իրենց օրինակով հավաստեցին հայ կնոջը բնորոշ այդ հատկությունները: Սակայն այդ հատկությունները անհրաժեշտ են ոչ միայն Գյումրիում, այլև ողջ Հայաստանում:

Ուստի լիահույս եմ, որ սույն ուսումնասիրությունն իր արդյունքներով գործնական նպաստ կբերի կանանց և դրանով իսկ՝ ընդհանուր իրադրության բարելավմանը ո՞չ Հայաստանում:

Ֆուլեր Չայթց
Գերմանիայի Դաշնային
Հանրապետության
դեսպան

Հարգելի բարեկամ

«Կանանց դիրքը և դերը հայկական հասարակութիւնում» ծրագրի իրականացման քաղաքաբար պայմանավորված էր այն համոզմունքով, որ սոցիոլոգիական և գիտական հետազոտութիւնների արդյունքների համակողմանի վերլուծութեամբ միայն կարելի է ճիշտ ներկայացնել արդի հասարակութեան արժեքային կողմնորոշումը և առաջարկել կուտակված խնդիրների լուծման առավել իրատեսական տարբերակներ: Այսօր հարկավոր է համատեղ ուժերով հասնել ժողովրդավարական և իրավական հասարակարգ կառուցելու գործընթացին հասարակութեան տարբեր խավերի ակտիվ մասնակցութեամբ: Վերջապես միայն ակտիվ հասարակութիւնն է ի գործ պահանջել ակտիվ պետական կառավարման համակարգ, և, իր հերթին, նման համակարգի գոյութեամբ չի արդարացի պատիվ հասարակութեան գործոնը:

Կարևորելով Հայաստանի քաղաքացիների դերն ու պատասխանատուութիւնը քաղաքացիական հասարակութեան ձևավորման արդի փուլում՝ կարծում ենք, որ այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտութիւն է առաջացել նորովի դիտարկել կանանց դերն ու մասնակցութիւնը փոխակերպվող հասարակութեան տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգևոր արժեքների վերագնահատման գործում:

Հետազոտութիւնն անց է կացվել Գյումրիում՝ հաշիւ առնելով վերջին տասնամյակի սոցիալ-տնտեսական և հետադեպային ցայսօր լուծում չստացած բազում կենսական և օրախնդիր հիմնահարցերը: Ավանդապահ, աշխատասեր հայուհին այսօր հայտնվել է բոլորովին նոր սոցիալ-հոգեբանական միջավայրում՝ ակնկալելով ուշադրութիւն և աջակցութիւն: Կանանց հիմնախնդիրներն ու հասարակութեան մեջ նրանց դերի բարձրացմանն այսօր հարկ է առավել լուրջ հետևողականութեամբ մոտենալ: Զգտելով տղամարդկանց և կանանց իրական իրավահավասարութեան՝ անհրաժեշտ է հիշել պետական շինարարութեան գործին վերջիններխ ներգրավման կարևորութիւնը: Ի վերջո պիտի չմոռանանք, որ կանայք իրենց բնածին խոհեմութեամբ ազգանվեր ծրագրեր իրագործելու մեծ ներուժ ունեն:

Իրականացված սոցիալական հոտազոտութեան արդյունքում աշխատանքային խումբը ներկայացրել է առաջարկներ՝ փոփոխվող հասարակութեան պայմաններում կանանց դերի և ակտիվութեան որոշակի հայեցակետերի վերլուծութեամբ: Կարծում ենք, որ հետազոտութեան արդյունքները կքննարկվեն ոչ միայն պետական, այլև ոչ պետական կառույցներում և ինչ-որ չափով կնպաստեն հայկական հասարակութեան մեջ կանանց դիրքի և դերի բարձրացմանը:

Հարգանքով

Արմեն Դարբինյան
Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի
Հոգաբարձուների խորհրդի նախագահ

1. Մուտք

Այսօր պատահական չէ, որ կանանց դրու-
թյունը, դիրքն ու հիմնախնդիրները դար-
ձել են միջազգային բազմազան ասոցի-
աների ու հասարակական-մարդասիրական կազմակեր-
պությունների օրակարգի կարևորագույն և վճռորոշ
բաղկացուցիչը: Երե արևմտյան ժողովրդավարութայն
և անտեսական համեմատաբար բարգավաճ պայման-
ներում առաջնային են գենդերային և այլ, նույնիսկ,
ալտրոուխտական բնույթի ծրագրերի իրականացումն
ու հիմնախնդիրների լուծումը, ապա հետամբող-
ջատիրական հասարակութայններում, որտեղ միան-
գամից ծառայել է բազում դժվարին խնդիրների լուծ-
ման անհրաժեշտութայնը, պատկերն այլ է:

Ինչպես հետխորհրդային շրջանի յուրաքանչյուր
նորանկախ պետութայն, այնպես էլ Հայաստանը չէր
կարող անմասն մնալ փոխարկվող հասարակութայն
մեջ կատարվող գարգացումների հետևանքով ստեղծ-
ված դժվարութայններից:

«Տնտեսական և սոցիալական վերափոխումներն
ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում ծայրա-
հեղորեն փոխեցին Հայաստանի միլիոնավոր քաղաքա-
ցիների ապրելակերպը, ձևավորեցին բոլորովին նոր
սոցիալ-հոգեբանական միջավայր» (ՄՁԶ, 1998, էջ
87): Մակայն այսօր արդեն Հայաստանում, որպես
փոխարկվող հասարակութայն առանձնահատկու-
թյուն, նշվում է «...սոցիալ-տնտեսական պրոցեսների
կառավարումից պետութայն չարգարացված, սակայն
մասնակիորեն հարկադրված ինքնամեկուսացումը
(Ն.Տ., էջ 86):

Շիրակի մարզում, մասնավորապես Գյումրիում,
այդ գործընթացներն ունեցան տարածաշրջանային
առանձնահատկութայններ, որոնք պայմանավորված
էին այն հանգամանքով, որ այստեղ մինչև օրս
վերացված չեն 1988-ի աղետալի երկրաշարժի
հետևանքները, որոնք էլ իրենց հերթին ծնում են նոր՝
հատկապես սոցիալ-հոգեբանական բնույթի լուրջ
պրոբլեմներ: Վերջիններս համակողմանի հետա-
զոտում, վերլուծութայն, այսօրվա պայմաններում
«գործուն սոցիալական քաղաքականութայն» կիրա-
ռում են պահանջում: Այդ ուղղութայնք աշխատանք-
ներն սկսվեցին թե՛ պետական, կառավարական
մակարդակով և թե՛ հասարակական կազմակերպու-

թյունների ու առանձին անհատների կողմից: Ակտիվ
աջակցութայն ցուցաբերեցին նաև արտասահմանյան
պետական ու հասարակական կառույցները: Աշխա-
տանքներն այսօր էլ շարունակվում են՝ ընդգրկելով
նոր ոլորտներ ու բնագավառներ, ձեռք բերելով
դրսևորման նոր ձևեր:

Վերը նշվածով պայմանավորված՝ կանայք
հայտնվել են սահմանային իրավիճակում՝ դառնալով,
եթե կարելի է այսպես ասել, կրկնակի խոցելի խումբ:
Վերջին տարիների հայ ընտանիքի սոցիոլոգիական և
հոգեբանական որոշ հետազոտութայններ ցույց են
տվել, որ ճգնաժամի ամենածանր 1992-93 թվական-
ներին տղամարդիկ առաջինը հայտնվեցին անորոշու-
թյան վիճակի մեջ: Սահմանային այս իրավիճակում
նկատելի էր կանանց ավելի մեծ կազմակերպ-
վածութայնը և սովորական պայմաններում չեն-
թաղրվող ակտիվութայնը: 1994թ. սկսած, երբ ճգնա-
ժամի հաղթահարման միտումները դարձան ակն-
հայտ, կանայք հիմնականում վերադառնում են
նախկին դիրքին ու դերին (ՄՁԶ, 1997, էջ 68):
Ասվածը, թերևս, մեծ վերապահութայնք կարելի է
բնորոշ համարել Գյումրու, Շիրակի մարզի համար,
քանի որ այսօր գյումրեցի կինը հայտնվել է մի
իրավիճակում, երբ ստիպված է համապատաս-
խանեցնել կնոջ ավանդական դերը կյանքի ժամանա-
կակից պահանջներին ու պայմաններին: Խոստովա-
նենք, որ սա լուրջ ու դժվարին խնդիր է, մասնավոր
Գյումրու նման համեմատաբար փոքր և ընդգծված
ավանդութայններով ու պահպանողականութայնք ա-
ռանձնացող քաղաքում: Այդ խնդրի լուծումը
պահանջում է նպատակամետ ու հետևողական
աշխատանք, նոր աշխատանք: Մինչդեռ, ինչպես
նշվում է. «Ընդհանուր առմամբ, սոցիալական քաղա-
քականութայն վերափոխումները և կիրառվող մեխա-
նիզմները գնահատելիս հարկ է լինում հավաստել շատ
քայլերի անհետևողականութայնը և անկատարու-
թյունը: Ըստ էութայն, սոցիալական ոլորտի վերա-
փոխման գործընթացը գտնվում է կեսճանապարհին,
երբ դեռ դժվար է խոսել ոլորտի գործունեութայն
օպտիմալ մոդելի ամբողջական պատկերացումների
մասին (ՄՁԶ, 1998, էջ 78): Եվ այս դեպքում խիստ
կարևորվում են սոցիալ-տնտեսական նոր պայման-
ներին հասարակութայն հարմարվելու մեխանիզմ-
ները: Այս հարցում էլ դիտարկումները հուսադրող
չեն: Որպես հարմարվողականութայն մի մեխանիզմ

ընտրվել է «...աշխատունակ բնակչության զանգվածային արտագաղթը և արտագաղթողների կողմից հայրենիքում մնացած հարազատներին ուղղվող ֆինանսական տրանսֆերտները, որոնք կազմում են ընտանիքի սպառողական բյուջեի մոտավորապես 15%-ը (Ն.ա., էջ 87):

Այնքանով է դյուրին նկարագրել ստեղծված իրավիճակը և քվարկել սոցիալ-հոգեբանական խնդիրները, որքանով պարզ է, որ Գյումրիում չկա խնդիր, որ գոյություն չունենա:

Այսինքն, սոցիալական, տնտեսական, քաղաքական, հոգեբանական, բարոյական, հոգևոր որևէ հիմնախնդիր չկա, որ այսօր նշվի որպես գոյություն չունեցող, որպես անհապաղ լուծում չպահանջող: Իրոք, ստեղծված իրավիճակը շճնեցուցիչ անհունալիություն է ներկայացնում: Սակայն... Կորո՞ղ ենք արդյոք լիարժեք պատասխանատվությամբ հայտարարել. «Ելք չկա»: Ձևակերպում, որ հաճախ ենք լսում այս կամ այն առիթով: Սառնասրտորեն, թե սրտացավ այս միտքն են հաստատում նաև պետական պաշտոնատար անձինք. լավագույն դեպքում ավելացնելով. «Թունելի ծայրում լույսը կերևա տասնյակ տարիներ անց միայն»: Այսպիսի հոռետեսական մոտեցումներով են հազեցած զանգվածային լրատվության միջոցները: Ամենուրեք, ամեն տեղ շահարկվում է մի միտք. «Ելք չկա»:

Չէի ցանկանա Գյումրին առաձնացնել և կրկնվել. «Այստեղ ավելի վատ է, քան...»: Թողնենք համեմատական վերլուծությունը և ջանանք հասկանալ, թե այսօրվա Գյումրին ի՞նչ երևույթ է: Ի՞նչ ճանապարհ է անցել՝ սկսած իր ծնունդից դեպի աճն ու զարգացումը, հասունությունը, ծաղկումը և միգրացիա, մեր աչքերի առջև կատարվող հոգեվարքը: Հոգեվարք, որն այնքան դժվար է խոստովանել: Սակայն մի ճշմարտություն կա. մինչև հիվանդ չզննվի և, վերջապես, չախտորոշվի, ապա հնարավոր չէ նրան բուժել: Իսկ եթե ծայրահեղ վիճակ է, ապա պետք է մտածել երկարատև վերականգնման կամ վերակենդանացման մասին: Չշտապենք ախտորոշել: Հիվանդի գնումները կատարենք մանրակրկիտ և լրջորեն, մի կողմ թողնելով «Ամեն ինչ գիտենք, ամեն ինչ կարող ենք»-ի կեցվածքը: Հուզական շտապողականությունը անթույլատրելի է: Քաղաքը մահանում է կամ քաղաքը մեռած է ձևակերպումները հաստատելուց առաջ պետք է անհապաղ կանգ առնել:

Ի՞նչ իրավունքով ենք քաղաքը մահացած ճանաչում, երբ գործում են տասնյակ դպրոցներ, հիվանդանոցներ, մեծ ու փոքր զանազան հաստատություններ: Պետք է ուշքի գալ և կտեսնենք, որ քաղաքում կան երեխաներ, երիտասարդ ընտանիքներ, և, վերջապես, ապրող մարդիկ: Մենք իրավունք չունենք նրանց մղելու ինքնասպանության: Անզգույշ ենք այս խոսքերը արտաբերում: Նման վերբալ արտահայտումների ժամանակ հոգեբանական հետևանքները խիստ անցանկանալի են:

Ես տեսնում եմ, որ ճչացող խնդիրներ կան, որ տազնապային է վիճակը, սակայն այս բազմաչարչար քաղաքը դեռ շնչում է: Չեմ կարծում, որ պետք է ծննդատունը փակել: Հազվադեպ, բայց տեսնում ենք հղի կանանց:

Միգրացիա մեր վատատեսությամբ շտապում ենք արդարացնել մեր սեփական անգործությունը, Երևանին մեղադրելը, տուժվածի կեցվածքից չիրաժարվելը: Չգիտեմ, թե այսօր Գյումրիում քանի մարդ կա: Գիտեմ, որ մեծ թե փոքր, կոչվի գյուղ թե քաղաք, սա մի բնակավայր է, որտեղ զարգացման հնարավորություններ կան: Այդ հնարավորությունների հիմքում կանգնած են մարդիկ, ովքեր ունեն աշխարհում ամենաթանկը՝ միտքը...

Սպորտը, արվեստը, երաժշտությունը, գիտական միտքը, արտադրության փորձերն այսօր զարգանում են Գյումրիում: Այդ զարգացումը կատարվում է ուրույն ձևով: Հոռետեսությունը մեզ խանգարում է տեսնել և զգալ, որ ապրում ենք և շատ անելիքներ ունենք: Մտքներովս անգամ չպետք է անցկացնենք, որ քաղաքը մեռնում է: Խղճահարություն առաջացնելով օգնությունը չի ավելանա, այլ կմեծանա քաղաքը մեռած համարողների թիվը: Վերջիններս կարծես անգիտակցորեն խնդրի լուծումը տեսնում են բնակչության թվի նվազման մեջ: Ահա թե որն է ողբերգությունը: Լիարժեքորեն չենք գնահատում իրականությունը և պատրաստ չենք ճշմարտությունը խոստովանել և ընդունել: Անհանդուրժելի է ընդունել «կործանվում ենք» ձևակերպումը, որով կարծես արդարացնում ենք շարունակվող և կրկնվող սխալները:

Մինչդեռ, եկեղեցի գնացողների, հոգեբանի դիմողների, ելք փնտրողների ամեն քայլափոխին կհանդիպենք Գյումրիում: Չի՞ նշանակում արդյոք սա, որ ապրելու մեծ ցանկություն կա, որ կենսունակության այս ոգևորող օրինակներն ապացուցում են քաղաքն ապրում է: Գյումրին պարզապես լուծումներ է փնտրում: Լուծումներ տասնյակ խնդիրների, կյանքի բոլոր բնագավառներում: Հենվենք այս կենսունակության վրա և հաջողություն կունենաք:

Քաղաքի հետագա բարգավաճման համար բազում խնդիրներից կառանձնացնելի սոցիալ-հոգեբանական բնույթի մի կարևոր ուղղություն երեխաների առողջության, կրթության և դաստիարակության հարցը, որի համար առաջարկում են վերադառնալ դեպի սկիզբ և ներդրումներն ուղղել դեպի երեխաները.

1. Երեխայի և մոր նախածննդյան և հետծննդյան առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների կազմակերպում, գրագետ և դրական ծնողության կազմակերպում,
2. Պրակտիկ հոգեբանների և սոցիալական աշխատողների գործունեության ակտիվացում կրթության և առողջապահության ոլորտներում,
3. Կանանց առողջության, ինտելեկտուալ զարգացման, սեփական դերի և նշանակության

գիտակցությանն ուղղված ծրագրերի իրականացում (այստեղ կարևորում եմ կանանց հիմնախնդիրներին նվիրված պարբերականի լույս ընծայման հարցը):

«Նարեկ» հոգեբանական ծառայության կենտրոնի տնօրեն՝
հոգեբան Արմինե Գնյուր-Կարապետյան

Ըստ «Երկրաշարժի գոտու նոր բնակարանային ուղեւորություն» վերջնական գեկույցի (1998, էջ 91, 152), Գյումրիում ընտանիքի գլխավորների թվում կանայք կազմում են 26.2%, ընտանիքի գլխավոր եկամուտ բերողների մեջ՝ 32.5%: Այս և նման այլ կարևոր փաստեր բացահայտելու նպատակ էր հետապնդում կանանց չըջանում անցկացված սոցիոլոգիական հարցումը, որն առաջին հերթին հենց իրենց՝ կանանց լսելու մի միջոց է: Իրա արդյունքում հայ կինը (գյումրեցի կնոջ օրինակով) ներկայացել է որպես առանձնացված այս կամ այն խմբի ներկայացուցիչ՝ իր հոգսերով, պրոբլեմներով, սակայն և՛ անսպառ հույսով, լավատեսությամբ, կյանքի դժվարություններին դիմակայելու դարերով իմաստացած փորձով: Ճիշտ է, այս վիճակը բնորոշ է բոլոր հայուհիներին, սակայն վերջին 10-12 տարիների իրավիճակը Գյումրիում, ի տարբերություն նախորդ շրջանի կյանքի, ավելի շատ նման է մոճավանջի, պարզունակ գոյատևման, քան թե՛ լիարժեք կենսագործունեության: Ստեղծված պայմաններում առավել ևս կարևորվում են իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունն ու դրանց հիման վրա լուծումների ճանապարհների որոնումը:

Հետաքրքիր է այն փաստը, որ հարցվողների մեծ մասը, դժգոհելով պետական կառավարման մարմինների գործունեությունից, այնուամենայնիվ, իր պրոբլեմների լուծումները կապել է պետական իշխանության հետ: Ո՞րն է պատճառը. լավատեսությունը, թե՞ պետության կողմից աղետի գոտու նկատմամբ պարտավորությունների կատարման ակնկալիքը:

Ավելորդ չէ արձանագրել նաև այն փաստը, որ ժողովրդավարական, իրավական և սոցիալական պե-

տություն կառուցելիս կանանց վիճակի բարելավմանն ու նրանց նկատմամբ խտրականություն վերացմանն ուղղված գլխավոր նպատակը պետք է հանդիսանա կանանց լիակատար և իրավահավասար մասնակցության ապահովումը ՀՀ քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր կյանքին: ՀՀ Սահմանադրությունում և օրենքներում սահմանված են տղամարդկանց և կանանց հավասար իրավունքներ ու դեկլարատիվ ազատություններ: Ցավոք, հնարավորությունների իրականացման ընթացքում չի պահպանվում իրական (դե ֆակտո) իրավահավասարությունը: Կինը հայկական հասարակությունում չափազանց մեծ առաքելություն ունի կատարելու, և իրավական դաշտի համապատասխանեցման անհրաժեշտությունն իրական սոցիալ-իրավական պայմանների հետ մի անգամ ևս փաստվեց կատարված սոցիոլոգիական հարցման արդյունքում:

Կանայք, հասարակության մեջ կնոջ և տղամարդու իրավունքների հավասարությունը 75.2% դրական վերաբերվելով հանդերձ, հավասարություն չեն տեսնում սոցիալական ոլորտում:

Վերջնական գեկույցը ներկայացվում է յոթ վերլուծական հաղորդումներով, որոնցում ընդգրկված են հայկական հասարակությունում կանանց դերի և դիրքի մի շարք ասպեկտների վերաբերյալ վերլուծություններ, կատարվել է կանանց սոցիալ-հոգեբանական խմբավորումներ և, ամենակարևորն է, որ առաջադրվում են ծագած բազում խնդիրների լուծման մի շարք գործնական ուղիներ:

2. Կնոջ ավանդական դերային ֆունկցիաներն ու դրանց փոփոխությունները մեր օրերում

Ընդունված է, որ կինը, որպես այդպիսին, երեք հիմնական ֆունկցիա է կատարում՝ մանկածնություն, սոցիալիզացիայի կամ դաստիարակության և կենցաղավարության կրողի: Ընդ որում, նրա էություն կարևորագույն դրսևորումն անձի սոցիալիզացիայի ֆունկցիան է՝ այսինքն երեխայի շփումը մշակույթի հետ, նրա կրթվելն ու դաստիարակվելը: Կնոջ-մոր միջոցով մարդ-անհատը ստանում է էթնիկական ու սոցիալական բնութիւն, դառնալով Հասարակության, որպես սոցիալական օրգանիզմի լիիրավ անդամ: Այսպիսով, կինն է ստեղծում Հասարակությունը՝ իր գավակներով:

Ըստ Հայ ժողովրդի պատկերացումների, կինը տան ներսի պատն է, տունը նրա տարածքն է, նրա գլխավոր խնդիրը՝ ընտանիքի, օջախի պահպանությունը, երեխաների խնամքն ու դաստիարակությունը: Կնոջ նկատմամբ վերաբերմունքը ընտանիքում և Հասարակության մեջ ձևավորվում և ամրապնդվում էր նրա ստեղծարար էություն բոլոր երեք դրսևորումների Համապատասխան: Որքան շատ գավակ է ունեցել կինը, այնքան բարձր է եղել նրա հեղինակությունը: Հայ իրականության մեջ բարձր է գնահատվել նաև կնոջ կենցաղավարման ընդունակությունը: Եթե ավանդական Հայ ընտանիքում տղամարդը զբաղվում էր գյուղատնտեսությամբ ու արհեստներով, ապա կանայք իրենց վրա էին կրում ընտանիքի կենցաղային հոգսերը՝ ապահովելով ընտանիքի անդամներին սնունդով և հագուստով: Հասարակությունը գնահատում էր շնորհքով, ոսկեձեռիկ կնոջը: Այս հատկությունների շնորհիվ Հայ կինն ընտանիքում եղել է ամուսնու ոչ թե ենթական, այլ նրա անմիջական օգնականը: Չնայած Հայ կինը ուղղակի չէր մասնակցում Հասարակական կյանքին և ներփակված էր ընտանիքի ներսում, այնուամենայնիվ, չափազանց մեծ հեղինակություն ուներ. նա ընտանիքի կրող սյունն էր, հեծանը, իսկ մեծ մայրը ամուսնուն Հավասարազոր իշխանություն ուներ ընտանիքի բոլոր անդամների վրա:

Այժմ, գործազրկության և ոչ լրիվ աշխատանքային զբաղվածության այսօրվա պայմաններում, նոր

սոցիալ-տնտեսական իրավիճակում, երբ քանդվում են նախկին կապերն ու հարաբերությունները, Հայ կինը ևս կրել ու կրում է դերային խոր փոփոխություններ: Շրջվում է Հայ կնոջ ավանդական կերպարը, այսինքն փոխվել են նրա դերերն ու հիմնական նախաստեղծ ֆունկցիաները: Հայուհին այլևս շատ երեխաներ չունի և քիչ ժամանակ է հատկացնում նրանց դաստիարակությանը՝ զբաղված լինելով կերակրելու ու հագցնելու խնդիրների լուծման ուղիների որոնումով: Այս պայմաններում ընտանիքում կատարվում է դերերի փոփոխություն՝ այսինքն, եթե ըստ ավանդական ընկալումների ու պատկերացումների «կինը տան ներսի պատն է», ապա այսօր նա, անկախ իր կամքից, դառնում է նաև «դրսի պատն»: Խախտվում է ընտանիքի ազգային-ավանդական մոդելը, որն էլ ուղղակիորեն բերում է այն բոլոր բացասական երևույթներին, որոնց հարթումը մեր իրականության գերխնդիրն է այսօր:

Փորձենք վերոհիշյալ փաստարկները դիտարկել Հարցաթերթիկների արդյունքների Համապատասխան: Հարցման ենթարկվածների ճնշող մեծամասնությունն ունի փոքր ընտանիք՝ 1անդամ-6%, 2 անդամ-11.2%, 3 անդամ-13.4%, 4 անդամ-24%, 5 անդամ-25.8%, 6 և ավելի անդամ-19.6% (տես աղյուսակ 53): Այսինքն այսօր Հայ կինը «յոթ որդով սեղան» չի կարող նստել: Իսկ ծնելիության անկման մասին ոչ միայն Գյումրիում, այլև ողջ Հանրապետությունում այնքան է գրվել ու խոսվել, որ այժմ դրան չենք անդրադառնա:

Վերադառնանք Հայ կնոջ մյուս դերերին: Կնոջ, մոր և դստեր դերերի մեջ Հայուհին առաջնությունը տալիս է մորը՝ 67.6% (տես՝ դիագրամա 8): Ընդ որում այդ կարծիքին են ամուսնացածների 77.2%-ը, ամուսնալուծվածների 72.2%-ը, այրիների 79.4%-ը, միայնակների 50%-ը, չամուսնացածների 15%-ը (տես՝ աղյուսակ 33): Այսպիսով երեխա ունեցող կնոջ համար առաջնայինը մայրական պարտականությունների կատարումն է: Կնոջ և դստեր դերերը կարևորում են Համապատասխանաբար 16.4% և 16%-ը: Այդ թվում կնոջ դերին նախապատվություն են տալիս ամուսնացածների 18.3%-ը և ամուսնալուծվածների 22.2%-ը, որոնք տարիքային առումով Համեմատաբար երիտասարդ են (18-39 տարեկան): Բնականաբար դստեր դերը կարևոր է գերազանցապես չամուս-

նացածների համար (72.6%), քանի որ նրանք դեռ չեն ստացել կնոջ և մոր կարգավիճակ (Ֆունկցիա):

Հայ կնոջ համար միշտ առաջին տեղում եղել է ընտանիքը: Այսօր ևս ընտանիքը հայուհու համար ամենամեծ ու կարևոր արժեքն է: Հարցման մասնակիցների 73.2%-ը այդ կարծիքին են, ընդ որում հատկապես մեծ է ընտանիքի դերը տնային տնտեսուհիների (85.5%) և գործազուրկների (80.6%) համար, որոնք ամբողջ օրն անցկացնում են սեփական ընտանիքի հետ: Մասնագիտական հետաքրքրությունները ընտանիքից բարձր են դասել գերազանցապես աշխատող կանայք (51.1%), իսկ ընդհանուր առմամբ հարցվողների 20.8%-ն են այդ կարծիքին (տե՛ս աղյուսակ 28):

Ձնայած սոցիալ-տնտեսական ծանր պայմաններին, այսօր էլ Հայ կինը մերժում է ոչ ավանդական աշխատանքով (չինարարություն, արտագնա աշխատանք, ծանր ֆիզիկական աշխատանք) կնոջ զբաղվելը: Հարցման մասնակիցների 64%-ը դա համարում է բացասական երևույթ, իսկ 14.6%-ը անտարբեր են, որը ևս կարելի է համարել ավելի շուտ բացասական, քան թե դրական պատասխան (տե՛ս աղյուսակ 20):

Որոշ փոփոխություններ են նկատվում ամուսնություն և ներընտանեկան խնդիրների նկատմամբ հայուհու ավանդական վերաբերմունքի մեջ: Այսպես, աղջկա համար ամուսնությունն նախընտրելի տարիքը համարվում է 20-25 տարեկանը՝ 69.4% (տե՛ս աղյուսակ 12), իսկ որ ավելի հետաքրքիր է, մինչ ամուսնությունը երիտասարդների ազատ և ավանդական մտերմական հարաբերություններին կողմ են գրեթե հավասար թիվով հարցվողները՝ 45.2% և 46% (տե՛ս աղյուսակ 14): Տարբերությունը փոքր է նաև նորաստեղծ ընտանիքի բնակության խնդրի վերաբերյալ դիրքորոշման մեջ: Հարցվողների 56.4%-ը կողմ է առանձին ապրելուն, մինչ ավանդաբար ընդունված հայրատեղային, այսինքն տղայի ծնողների հետ ապրելուն կողմ են 43%-ը, որը, ճիշտն ասած, բավականին ցածր ցուցանիշ է ավանդապահ գյուղացու համար: Հարկ ենք համարում ներկայացնել այս հարցի պատասխաններն ըստ հարցվողների տարիքի, որովհետև տղայի ծնողների հետ ապրելու կողմնակիցների թիվը տարիքի հետ մեծանում է. այսպես՝ 18-28 տարեկանները՝ 22.2%, 29-39տ.- 23.4%, 40-50տ.- 57.1%, 51-61տ.- 52.7%, 62 և

բարձր տարեկանները՝ 65.8%, իսկ առանձին ապրելու կողմնակիցներինը՝ ընդհակառակը, փոքրանում է՝ 18-28տ.-76.9%, 29-39տ.- 76.6%, 40-50տ.-42.9%, 51-61տ.- 47.3%, 62 և բարձր տարեկանները՝ 31.8% (տե՛ս աղյուսակ 15):

Գրեթե նույնանման պատկեր է ընտանիքի նյութական ապահովման հարցի նկատմամբ վերաբերմունքում: Եթե ավանդաբար Հայ տղամարդն է համարվել տան հիմնական կերակրողը, ապա այսօր այդ դերն իր վրա է վերցնում նաև կինը: Հարցվողների 52.2%-ը տղամարդու վրա են դնում այդ պարտականությունը, իսկ 45%-ը գտնում են, որ այդ հարցն ամուսինները պետք է լուծեն միասին (տե՛ս աղյուսակ 17): Պետք է ասել, որ եթե ավանդաբար տղամարդու աշխատանքի արդյունքը տնօրինում էր կինը, ապա այսօր այդ խնդիրը ևս հակված են միասին լուծելու (53.4%): Ֆինանսները կնոջ տնօրինության տակ են դնում հարցվողների 29.4%-ը, իսկ տղամարդու՝ 17.2%-ը (տե՛ս աղյուսակ 18):

Միասին լուծելի խնդիր է համարվում նաև երեխաների դաստիարակությունը, որին կողմ են արտահայտվել հարցվողների 78.8%-ը (տե՛ս աղյուսակ 16): Մեր կարծիքով այս հարցի պատասխանում ավելի շուտ արտահայտվել է այսօրվա գյուղացի կնոջ ցանկությունը, քան թե իրականությունը, որովհետև առկա արտագնացության պայմաններում, երբ կինը միայնակ է իր երեխաների հետ և դաստիարակության ծանր լուծը կրում է մենակ, այս թիվն այնքան էլ, մեղմ ասած, իրական չէ: Բոլորիս քաջ հայտնի է, որ դարեր շարունակ Հայ կինն է իրականացրել իր զավակների կրթությունն ու դաստիարակությունը, և որ նրա շնորհիվ է մեր ժողովուրդը գոյատևել սեփական պետականության բացակայության պայմաններում: Մյուս կողմից այսօրվա ծանր սոցիալական պայմանները կնոջը ստիպում են ավելի քիչ ժամանակ անցկացնել ընտանիքում, ուստի երեխաների դաստիարակության գործը փորձում են կիսել ամուսնու հետ:

Հայ կինն ավանդաբար հասարակական հարաբերություններից դուրս է գտնվել և հասարակության մեջ կնոջ ու տղամարդու դերերը խիստ անհամաչափ են եղել. բարձր՝ տղամարդու համար և գրեթե բացակայում էր կնոջ համար: Այսօր, ըստ հարցման, շատ կանայք կողմ են կնոջ և տղամարդու

իրավունքների իրական հավասարությունը՝ 75.2%, իսկ դեմ են 17.8%-ը, որոնց մեջ մեծ թիվ են կազմում 40-ից բարձր տարիքի հարցվողները՝ 68.1%: Այսինքն դեմ է հարցվողների առավել ավանդապահ հատվածը (տե՛ս աղյուսակ 21):

Որպես կին իրենց բարձր գնահատելով հանդերձ (տե՛ս դիագրամա 5) գյուժերեցի կանայք գոհ չեն կնոջ իրենց ներկա վիճակից՝ 64%: Այդ թվում առավել դժգոհ են այրիները՝ 77.8%, ամուսնալուծվածները՝ 72.2% և միայնակները՝ 66.7%: Դրա պատճառ են համարում աշխատանքի բացակայությունը (12.2%), ֆինանսական վիճակը (19.2%), վատ ապրելակերպը (9.8%) և այլք (11.4%): Պետք է ասել, որ չամուսնացածների, ամուսնալուծվածների և այրիների 2.2%-ի համար այդպիսի պատճառ է ընտանիքի բացակայությունը (տե՛ս աղյուսակ 36):

Այս ամենի վերջում հարկ ենք համարում ասել, որ կանանց մեծ մասի համար, տրված ութ պատասխաններում, ամենակարևորը ջերմ փոխհարաբերություններն են (24%), ինքնահարգանքը (20.1%), զգացումը, որ միայնակ չեն (17.4%) և ուրիշների հարգանքը (14.4%), այսինքն այն, ինչի կարիքն այսօր առավել քան զգացվում է (տե՛ս աղյուսակ 44):

Այսպիսով, գյուժերեցի կինը, պահպանելով հանդերձ ավանդական հայուհու հիմնական՝ մայրական ֆունկցիան, մյուսներում որոշ փոփոխություններ է կրել: Նյութական պայմաններից ելնելով նա շատ գավակ չի ունենում և իր վրա վերցնելով ընտանիքը կերակրողի դերը՝ երեխաների դաստիարակությամբ քիչ է զբաղվում: Դրա հետևանքով մեծացել է անչափահասների կողմից կատարված հանցագործությունների և մուրացիկ երեխաների թիվը:

Կնոջը, մորն օգնելու ամենաէական միջոցը նրա ամուսնուն աշխատանքով ապահովելն է: Սակայն, քանի որ մեր երկրի այսօրվա վիճակում դրա իրականացումը դժվար է, ուստի ավելի օգտակար կլինի կնոջը հնարավորություն տալ իր սեփական աշխատանքով ինչ որ չափով թեթևացնել ընտանիքի ֆինանսական վիճակը: Դարեր շարունակ հայ կինն իր բարձրարժեք ձեռագործով կարողացել է փրկել իրեն ու իր գավակներին: Հարցի լուծման հնարավոր ճանապարհներից մեկը որոշ ավանդական կանացի զբաղմունքների վերականգնումն է, որոնք չեն պահանջում տնտեսական հիմնական միջոցների

(աշխատավայր, թանկարժեք գործիքներ ու սարքավորումներ և այլն) ներդրում: Այդպիսիք են ասեղնագործությունն ու ժանեկագործությունը, որոնցով զբաղվելով, կինը, առանց ընտանիքից կտրվելու, կարող է աշխատել և նյութական օգուտ ստանալ: Ուղղակի այս հարցը հարկավոր է հատուկ և մանրակրկիտ ուսումնասիրել ու մշակել միջոցառումների համալիր ծրագիր: Նախ անհրաժեշտ է գտնել արտագրանքի արտահանման շուկա, որը կարող են լինել ՀՀ-ում՝ Երևանը և այլ քաղաքներ, ինչպես նաև արտասահմանյան երկրներ: Երկրորդ պայմանը՝ մենեջմենթի ճիշտ և գրագետ կազմակերպումն ու շահագրգիռ կողմի օգնությամբ մասնագիտացված խանութ-սրահների բացումն է: Այսօր պահանջարկ ունեցող կենցաղային իրերի և հագուստների (անկողնու սպիտակեղեն, նորածնի հագուստի համալիր, երիտասարդ աղջիկների թեթև ժանյակե վերնագգեստներ և այլն) թվում փնտրել ամենամասսայականը, նորածնն ու գարծածականը և փորձել դրանք պատրաստել տեղում: Ուղղակի խնդրին հարկավոր է ճիշտ մոտեցում և ուշադիր վերաբերմունք: Ցանկացած գյուժերեցի կին կարող է տանը, իրեն հարմար ժամանակ, զբաղվել ձեռագործով, եթե նրան տրամադրվեն միայն գործվածքը, թելը և մողելը: Շուկայականից զգալիորեն ցածր գների պայմաններում դրանք կարող են առավել սպառողունակ լինել և «փրկության օղակ» դառնալ շատ ընտանիքների համար:

«Աշխատանքով բուժման» այս եղանակն անպայման դրականորեն կանդրադառնա գյուժերեցի կնոջ սոցիալ-հոգեբանական առողջացման, նրա դերային ֆունկցիաների շտկման և, ինչու էլ, նաև քաղաքային համայնքի հոգսի թեթևացման գործում:

Սեռի և սեռական ֆունկցիայի հարցերը վերաբերվում են այն խնդիրներին, որոնք գտնվում են մի քանի գիտաճյուղերի սահմանագծում: Ուստի և անհրաժեշտ է առանձին մասնագետների համատեղ ջանքերը՝ գտնելու կնոջ, մոր սեռական խանգարումների բանալին և լիարժեք կատարելու հետագուտական, բուժական աշխատանքներ:

Հիմնվելով ծրագրի շրջանակներում Գյուժերիում կայացած «Կանանց դիրքը և դերը հայկական հասարակությունում» հարցման արդյունքների վրա և դուրս գալով աշխատանքի ընթացքում ի հայտ

եկած առանձին դեպքերից՝ Հանգել ենք այն եզրակացությունների, որ առաջնահերթ խնդիր է համարվում ազգաբնակչության շրջանում ծավալել ոչ թե սեքսուալ թուղթիական, այլ սեքսուալիզմի հարցերի լուսաբանում: Դիմենք կորնկրետ թվերի: Թիվ 2 աղյուսակում արժեքային կողմնորոշումների հարցին 29-39 տարեկանների խմբից սեռական կյանքն առանձնացրել է 0 %-ը, երբ որ այդ տարիքային խմբի կանանց մոտ պետք է լինել ավելի բարձր թվային տվյալներ, քանի որ այդ հասակում կանանց մոտ բարձրանում է սեռական կյանքի նկատմամբ հետաքրքրությունն ու փորձը: Անհանգստացնում է այն փաստը, որ «Սեռական կյանքից Ձեր իրազեկությունն աստիճանն ու աղբյուրները» հարցերին (աղյուսակ 11) այս խմբի կանայք պատասխանել են - անտարբեր՝ 22.4%, և պատահական աղբյուրը նախընտրել են 32.7%-ը: Սրանք անցանկալի բարձր ցուցանիշներ են: Իսկ 18-28 տարեկանների 25.9%-ը այս բնագավառի իրազեկության տարբերակ են համարում պատահական աղբյուրը: Անհանգստացնող է, որովհետև հենց այս տարիքային խումբն ապագայում պետք է ստանձնի կնոջ և մոր դերը մեր հասարակության մեջ և այս խմբի միայն 13%-ն է ընտրում մասնագիտական խորհրդատվությունը: Այս իմաստով գուցե մասնակի վերանայման կարիք ունեն սեռական իրազեկության և ավանդական դաստիարակության համադրման ու համալրման ձևերը: Այդ աշխատանքները, որպեսզի ավելի արդյունավետ լինեն, նպատակահարմար է սկսել շատ վաղ տարիքից: Հաշվի առնելով սեռական ինքնագիտակցման ձևավորման տարիքային առանձնահատկությունները՝ (2-3 տարեկան) տարրական գիտելիքներ պետք է տրվեն այդ տարիքից սկսած: Սակայն արդեն դպրոցական տարիքում պետք է դրվի այդ հարցերի իրականացումը մասնագիտական հարթության վրա (մասնագիտական գրականություն, խորհրդատվություն): Հարցման արդունքներն էլ են դա հաստատում: Հարցվողների 52.4%-ը սեռական կյանքի իրազեկության նախընտրելի աղբյուր է համարել մասնագիտական գրականությունը (աղյուսակ 39): Այս աշխատանքները կնվազեցնեն նաև նրանց թիվը, որոնք իրազեկության տարբերակ են համարում պատահական աղբյուրը - 33.8% (աղյուսակ 39): Ընդ որում, վերջին խումբը, ըստ կրթական մակարդակի էական փոփոխություն է ենթարկվում՝ բարձրագույն կրթություն ունեցողների 16.3%-ից հասնելով տարրական կրթություն ունե-

ցողների 63.9%-ի (աղյուսակ 39): Այս հարցում կարևորում ենք մայրենի լեզվով մասնագիտական, հանրամատչելի գրականություն ունենալը: Այնուամենայնիվ, որպեսզի պատկերն ավելի որոշակի և հստակ լինի, թերևս լավ կլինի, եթե որպես փորձնական աշխատանքի սկիզբ, Գյումրիի մի քանի դպրոցներում անցկացվեն հարցումներ՝ այս հարցերի նկատմամբ ուսուցիչների, ծնողների ու աշակերտների վերաբերմունքը, իրազեկությունը ճշտելու առումով:

Այսօր կարելի է այդ աշխատանքների իրականացման տարբերակ ընդունել նախակրթարաններում, դպրոցներում աշխատող բուժանձնակազմի, դաստիարակների, ուսուցիչների համար կազմակերպվող բացատրական, խորհրդատվական աշխատանքները:

Լուրջ ուշադրություն պահանջող փաստ է նաև հետևյալ հանգամանքը. ըստ ամուսնական կարգավիճակի սեռական կյանքից իրազեկության մասին կանանց հետևյալ խմբերը՝ ամուսնալուծվածները և այրիներն անտարբեր են՝ համապատասխանաբար՝ 22.2% և 63.5%-ով (աղյուսակ 38): Վերջին խմբի այդ վիճակը, թերևս, պայմանավորվում է նաև կորուստ ունենալու հանգամանքով (հետադեպյան ժամանակաշրջանի մի առանձնահատկություն ևս):

Անշուշտ, սեռական դաստիարակության հարցը շատ նուրբ, խորիմաստ, ծածուկ հարց է և չի կարելի այն շոշափել անկարող, կոպիտ ձեռքերով, ավելորդ աղմկարարությամբ, ընկերովի հիմունքներով: Նման հարցերը անհրաժեշտ է լուծել մտածված, լուրջ, խելամիտ՝ թույլ չտալով ոչ կեղծ բարեպաշտական լուրջության, ոչ էլ վնասակար չափազանցության՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական և հոգեբանական առկա վիճակը: Իսկ ամենահիմնականը այս հարցում բժիշկների, դաստիարակների, մանկավարժների ու ծնողների համերաշխ մասնակցությունն է: Այս հարցում, մասնագիտական խորհրդատվության կարիքը կա, որը կարցնի իրազեկության բացը, իսկ որոշ ասպերերի և թերթերի՝ սիրողական մակարդակի հոգվածները, կարծում ենք, չի կարելի համարել համապատասխան իրազեկության աղբյուր: Բժիշկները, կենսաբանական տեսանկյունով լուսաբանելով սեռական գործունեության անատոմիաֆիզիոլոգիական առանձնահատկությունները, ստեղծում են այն հիմքը, որի վրա ծնողներին հեշտ է ամենախիտիմ հոգե-

բանական ապրումների արտահայտություն ժամանակ ուղղություն տալ երեխայի վարքագծին:

Հարցման արդյունքներն էլ հաստատում են այն կարծիքը, որ այդ նուրբ բնագավառն իրատեսական մոտեցումներ ու լուծումներ է պահանջում:

Ազգային ինքնագիտակցություն պատմության մեջ ազգի պահպանման և վերարտադրման գործառույթը կատարել է կինը: Որոշակիորեն նույն ազգապահպան գործառույթը կատարել են ազգային արարողություններն ու կրոնամշակութային ավանդակարգերը՝ յուրացվելով ազգի վարքագծում իբրև հոգեբանական պաշտպանական համակարգ: Կին և ընտանիք փոխհարաբերությունների ոլորտում առավելապես կարևորել ենք հետադեմության շրջանի կանանց հոգեբանական վիճակը: Աղետի հետևանքով Գյումրու բնակչությունը կորցրեց բնակարաններ, աշխատատեղեր, կերակրող ձեռքեր, մշակութային օջախներ: Այս հիմնախնդիրները ծանրացան մասնավորապես կանանց ուսերին, նրանք գրկվեցին կերակրող ձեռքից: Ընտանիքի գլխավորին կորցնելու կամ նրա՝ ընտանիքից հեռու լինելու պարագան խորացրեց առանց այն էլ հասարակական կյանքից օտարված կնոջ վիճակը: Բնականաբար, նոր կեցության պայմաններում կնոջ սոցիալական դերի փոփոխությունը պայմանավորված է հետևյալ հիմնախնդիրներով՝ աշխատատեղերի բացակայություն, աղետից հետո հասարակական կյանքում կնոջ դերի նվազում (առավելապես այս տարածքում անհրաժեշտ է կնոջ ավանդական պասիվության հաղթահարում), ապրելակերպի փոփոխությամբ պայմանավորված սոցիալական դերի տեղաշարժ, գործարար կյանքի ոլորտում կնոջ դերի մեկուսացվածություն: Միայնակ կանանց և սոցիալապես անպաշտպան կանանց սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական դժվարություններ:

«Կանանց դիրքը և դերը հայկական հասարակությունում» ծրագրի շրջանակներում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքներով կարելի է առանձնացնել հետևյալ սոցիալ-հոգեբանական տիպային խմբերի.

1. Սոցիալական նախկին դերը կորցրած կանայք

Կորցնելով երեխային կամ ամուսնուն, կորցրել են մոր, նաև կնոջ նախկին դերը, նրանք դարձել են անտարբեր միջավայրի և հասարակական խնդիրների նկատմամբ: Ապագայից նրանք սպասում են միայն

վատը՝ 42.8% (աղ.27): Ուշագրավ է, որ այս խումբն էլ, տարիքով պայմանավորված, էական տատանումներ ունի: Այս կանանց մեջ մեծ թիվ են կազմում 40-50 տարեկանները՝ 64.3%: Սա թերևս կապված է նաև կորուստ ունենալու հետ: Պետք է նշել, որ որպես կին իրենց վիճակից դժգոհների թիվը կազմում է 64.2% (աղ.34): Իսկ այս խմբում էլ ամենաբարձր ցուցանիշ ունեն այրի կանայք՝ 77.8% (աղ.34):

2. Վաղաժամ ծերացած կանայք

Անտարբեր են դարձել սեփական կյանքի և անձի նկատմամբ, կորցրել են ի վերուստ տրված կանացիությունը, չեն հետևում իրենց արտաքինին, չեն փորձում հաղթահարել ընկճվածությունը: Նրանց սպասելիքներն ապագայից անորոշ են՝ 16% (աղ.27), իսկ 40-50 տարեկանների խմբում այսպիսիներն նույնիսկ չկան: Այս խմբի հարցվողները դեպի լավը կողմնորոշված են՝ 33%, իսկ վատը՝ 64%: Նրանք օրվա ընթացքում իրենց արտաքին տեսքին և հարդարմանը գրեթե ժամանակ չեն տրամադրում (աղ.4), վարսահարդարի, դիմահարդարի ծառայություններից օգտվելու ցանկություն չունեն՝ 2.6%:

3. Ակամա խնամակալի կամ մոր դերն ստանձնած կանայք

Զոհված զավակների երեխաների խնամքը և մայրական պարտականությունները կատարող կանայք են, որոնց մեջ մեծ թիվ են կազմում տարիքային բարձր խմբի ներկայացուցիչները: Հարցվող կանանց 67.6%-ը նախընտրում է մոր դերը (աղ.1), որոնց մեջ առանձնանում են հետևյալ տարիքային խմբերը՝ 51-61 տարեկանները՝ 79.1%, 61-ից բարձր տարիք ունեցողները՝ 78%:

4. Ակտիվ գործող և ավանդապահությունը հաղթահարած կանայք

Նրանք ընտանիքը ղեկավարող, հասարակական և պետական բնագավառներում որոշ դիրքի հասած կանայք են, որոնց համար նշանակություն չունի իրենց սեփին հատուկ աշխատանքի տեսակը և պատրաստ են նոր մասնագիտություններ ձեռք բերել: Ուրախալի է, որ կանանց ոչ այնքան փոքր մասն է բավականին ակտիվ ու լավատես: Դրանց մասնաբաժինը կազմում է հարցվողների գրեթե 25%-ը: Նրանք պատրաստ են նոր մասնագիտություններ սովորելու՝ 28% (աղ.40), դրական են վերաբերվում

կնոջ՝ ոչ ավանդական աշխատանքներով զբաղվելուն- 21.4% (աղ.20), իրավահավասարությունը- 75.2% (աղ.21):

Առաջին երեք խմբերի կանանց բնորոշ է հուզազգացմունքային լարվածությունը: Նրանց վարքի շարունակական դրսևորումները աչքի են ընկնում ընդգծված էմոցիաներով: Սոցիոլոգիական հարցումները Հաստատեցին, որ նրանք ֆրուստրացված են, երբեմն ագրեսիվ են, մենակ, մեկուսացված: Աղետից հետո երեխա ունեցած կանայք (իբրև փոխհատուցում նախկին երեխայի կորստի) առանձնանում են երկփեղկված հոգեվիճակով՝ անցյալ ու ներկա ժամանակային չափումների մեջ առավելապես հակված են դեպի հետ՝ այդպես էլ չհաղթահարելով կորուսյալ դրախտի կոմպլեքսը, նոր զավակի մեջ փնտրում և չեն գտնում իրենց կորցրածին: Տիպաբանական առանձին խումբ են կազմում Համատարած լքվածության բարդույթ ունեցող կանայք, որոնք միկրոմիջավայրը կորցնելով, գտնվում են շարունակական դեպրեսիվ վիճակի մեջ: Այս են վկայում նաև սոցիոլոգիական հետազոտությունը կնոջ դերի և դիրքի վերաբերյալ, որի արդյունքում պարզ դարձավ, որ Գյումրի քաղաքի կանանց 38%-ի մոտ տեղի է ունեցել միկրամիջավայրի փոփոխություն և ապագայից սպասումները անորոշ են՝ 16% կամ հոռետեսական՝ 42.8% և այդ կանայք իրենց պրոբլեմների լուծումը ակնկալում են պատահականությունից: Վերջնարդյունքում այդ կանայք դառնում են վաղաժամ ծերացած կանայք, սոցիումից զրկված: Նրանք որոշակի ներուժ ունենալով չեն կարողանում իրեն ուժերը ներդնել որևէ գործի կամ սոցիալական շրջապատույթի մեջ դնել իրենց:

Առանձին խումբ են կազմում սոցիալ-հոգեբանական հարմարվածությամբ առանձնացող կանայք: Այս կարգավիճակում գտնվող կանայք հարմարվել են իրենց իրավիճակին, ներընտանեկան հարաբերությունների ոլորտում ամեն ինչ հարթեցնում են, ընտանիքի հոգսը առավելապես ստանձնել են իրենք՝ պահպանելով ընտանիքում ջերմության մթնոլորտը, արժեքային դեր վերագրելով ամուսնուն, որը չունենալով աշխատանք, կորցրել է իր սոցիալակն դերը, ամեն կերպ հոգեբանական պատվար լինել ընտանիքին: Բերենք թվային տվյալներ՝ ընտանիքում ջերմ փոխհարաբերությունները կարևորվում են հարցված կանանց 24%-ը, իսկ մոր դերը՝ 67.6% -ը:

Առանձնացրել ենք ևս մեկ խումբ, որոնք շարունակական վախի զգացում ունեն՝ կապված իրենց կարգավիճակի կորստյան հետ, որն իրենք Համարում են տնտեսական պատճառ ունեցող վախ՝ աշխատանքի և զբաղվածության բացակայությունը Համարելով որպես սոցիալական վախի գործոն: Ըստ ազգագրական հետազոտության արդյունքների մարդկանց շուրջ 70.3%-ը իրենց մեջ վախի զգացումի պատճառ են Համարում աշխատանքի և զբաղվածության անկայուն վիճակը: Շատերը՝ ավելի քան 83%-ը իրենց անհանգստացնող վախի և տաղնապի զգացման վերացումը Համարում են ոչ թե աղետից հետո առաջացած վախ, այլ կապում են աշխատանքի և զբաղվածության անկայուն վիճակի հետ: Իրականում աղետի վախը փոխակերպվել է աշխատանք չունենալու վախով, իհարկե որպես ֆոն տեսնելով դարձյալ աղետը: Նրանք ունեն իրենց կարողությունների և ունակությունների նկատմամբ անվստահության զգացում և որպես անհատ իրենց ինքնաիրացման վախ բոլոր առումներով: Այս տիպի կանայք բարձրագույն կրթություն ունեցող կանայք են, ինտելիտուայ: Նրանց մեջ մեծացել է իրենց անհատականությունը չզբսևորելու վախը և Համատարած է դարձել հոգեբանական փախուստի ու շփումներից խուսափելու երևույթը: Ինքնաիրացման վախի ազդեցությամբ չամուսնացած կանանց մեջ մեծացել է նաև վախը ամուսնության հանդեպ: Ներկայացնենք հետազոտության արդյունքները. ընդհանուր առմամբ իրենց վիճակից որպես կին գոհ են հարցվողների 35.8%-ը, իսկ գոհ լինողների մեջ ամենամեծ ցուցանիշը չամուսնացածներինն է՝ 41.1% -ով: Այս տիպի կանանց մեջ առաջացել է մերժվածի հոգեբանական բարդույթ, ինչի հետևանքով նրանցից շատերը վախենում են ընդհանրապես մերժվել տնտեսական ստեղծված իրողությունից և որակագրկվելով չօգտագործվել, այսինքն՝ դադարել արժեք ներկայացնելուց, իրենց անձի արժեքային և գործառութային կորստի վախը այսօր չափազանց գերակշռող է Հատկապես մեկ մասնագիտություն ունեցող ու դրանից զրկված կանանց մեջ, որոնք այլ մասնագիտություն չեն կարող կամ չեն ուզում սովորել: Այսպես՝ հարցվող կանանց միայն 28%-ն է պատրաստ ստանալու նոր մասնագիտություն: Նույնիսկ առևտրի միջոցով վաստակող կանայք հուսալքված են և բողբոբում են իրենց կարողությունների հանդեպ եղած արհամարհանքից և չիրացվելուց: Փաստորեն նրանք վախենում են

տանուկ տալ՝ չկարողանալով ձեռք բերել նոր մասնագիտական հմտություններ: Ըստ էության, վախի այս դրսևորումը կապված է կենսակերպի և գործելաձևի անբարձ կորստյան տաղնապի հետ: Աշխատանքի իրավունքից և ինքնազրուստրման հնարավորությունից զրկված կինը այնուամենայնիվ կուզենար դեր ունենալ գոնե հասարակական կազմակերպությունների ոլորտում: Ինքնահաստատումը սոցիալական բնավորության ձևավորման կամ հարմարվելու ուղենիշն է:

Վերջնարդյունքում կանայք վախենում են, որ ինչպես սոցիալական ոլորտում, այնպես էլ ընտանեկան կյանքում իրենց դերի կորուստը կարող է

հիասթափեցնել ամուսնուն (սերը կորցնելու վախ): Բոլոր դեպքերում, կինը ձգտում է հոգեբանորեն լիարժեք լինել: Ընտանիքում իր գործառույթի անլիարժեքությունը կարող է նաև երեխաների վերաբերմունքի մեջ փոփոխություն մտցնել, այսինքն՝ մերժվել բոլոր բնագավառներում՝ հասարակական, ընտանեկան և անձնական:

3. Կանանց պրոբլեմները եւ սոցիալ-հոգեբանական խորհրդատվությունը

Այսօր բոլորս ենք Համաձայն ու կրկնում ենք, որ լավ բժիշկը ոչ թե Հիվանդութեան դեմ դեղահաբեր է նշանակում, այլ փորձում է վերացնել Հիվանդությունը ծնող պատճառները: Իսկ դրա համար նա ուշադիր գննում է Հիվանդին, լսում է նրան, որպեսզի ճիշտ ախտորոշում կատարի:

Շիրակի մարզը, մասնավորապես Գյումրին, բավականին երկար ժամանակ է, որ գտնվում է շատ ծանր վիճակում, և սոցիոլոգիական հարցումը գյումրեցի կանանց լսելու մի տարբերակ ու առիթ է:

Իհարկե, այս ծանր վիճակի պատճառները բոլորիս են հայտնի. մինչև այսօր վերացված չեն 1988-ի աղետալի երկրաշարժի հետևանքները, դրանց գուժարվել են փոխարկվող Հասարակությունը բնորոշ խնդիրները, որոնք պայմանավորված են տնտեսական, քաղաքական կյանքի զարգացումներով: Դրանք իրենց ընդգրկման ծավալով չեն գիշում երկրաշարժին: Եվ Գյումրիում մինչև այսօր մնացած կիսաքանդ շենքերի դատարկ պատուհանները կարծեք խորհրդանշում են կյանքի դժվարություններից, հերթական հիասթափություններից և հուսալքումից մարդկանց հոգիներում առաջացած խոցերն ու վերքերը: Այս ամենը պայմանավորում են այն աշխատանքների հրատապությունն ու անհրաժեշտությունը, որոնց արդյունքում ճշգրտվում են սոցիալական խոցելի խմբերը, դրանց կարիքներն ու պրոբլեմները ծնող պատճառները: Այդ առումով խիստ արդիական է այն աշխատանքը, որը նպատակաուղղված է փոխարկվող Հասարակության մեջ կանանց խնդիրների բացահայտմանն ու լուծմանը:

Երկրաշարժից հետո անցած տարիների ընթացքում ստեղծված իրավիճակը, ժողովրդագրական փոփոխությունները նոր հարցադրումներ են արել կանանց դերի, նրանց պաշտպանվածության, իրավահավասարության խնդիրների լուծման քաղաքականության ճշգրտման անհրաժեշտության առումով: Այս խմատով, անցկացված սոցիոլոգիական հարցումը, կարծում ենք, նաև որոշակի հստակեցում մտցրեց: Ինչպես նշեցին հարցման արդյունքների քննարկմանը նվիրված կլոր սեղանի մասնակիցները, հարցումը համապատասխան ինֆորմացիայի ստացման, փոխանակման ու քննարկման համար ընդունելի

ու արդյունավետ տարբերակ է: Հենվելով այսպիսի արդյունքների վրա՝ կարելի է եզրակացնել, որ Գյումրիում այսօր գոյություն ունեն կանանց հետևյալ խմբերը.

1. Կանայք, ովքեր առանձնանում են իրենց սոցիալական ակտիվությամբ, իրենց հետ են կապում իրենց վիճակը, խնդիրներն ու դրանց լուծումը և որևէ բան արել են այդ վիճակից դուրս գալու համար, կողմ են կանանց ու տղամարդկանց իրավահավասարությանը: Նրանք առանձնանում են նաև իրատեսությունով, ընդունակ են ընկալելու և փոխվելու ժամանակի պայմաններին ու պահանջներին համեմատ: Կանանց այս խումբը կազմում է մոտավորապես՝ 20-25%: Այդ են հաստատում հետևյալ հարցերին նրանց տված պատասխանները.

- Ու՞մ կամ ինչի՞ հետ եք կապում Ձեր հիմնական պրոբլեմի լուծումը - սեփական ուժերի՝ 19.2% (աղ. 26).
- Պատրաստ եք ստանալու նոր մասնագիտություն՝ կազմակերպված դասընթացների միջոցով - այո՝ 28% (աղ. 22).
- Ինչպե՞ս եք վերաբերվում կնոջ՝ ոչ ավանդական աշխատանքով զբաղվելուն - կողմ՝ 21.4% (աղ. 20).
- Այս խմբին են պատկանում նաև այն կանայք, որոնք գոհ են իրենց վիճակից՝ որպես կին՝ 35.8% (աղ. 34), ապագայից դրական, լավ սպասելիքներ ունեն՝ 35.2% (աղ. 27): Ընդդրում, պետք է նշել, որ այս վերջին հարցում տարիքային որոշակի տարբերություններ կան: Այսպես, օրինակ, 18-28 տարեկանների մոտ այս թիվը մի փոքր ավելին է՝ 38.9%, 40-50 տարեկանների խմբում՝ պակաս է՝ 33%, իսկ 51-61 տարեկանների մոտ՝ անհամեմատ ավելի ցածր՝ 28.6%: Ուշագրավ է, որ 61-ից բարձր տարիք ունեցողների մոտ դրական, լավ ակնկալիքներ ունեցողների թիվը դարձյալ կտրուկ բարձրանում է՝ գրեթե հասնելով առաջին խմբի ցուցանիշին՝ 37.8%: Գրեթե այսպիսի, սակայն հակադարձ համեմատական հարաբերություն է նկատվում այդ տարիքային խմբերի մոտ՝ իրենց հիմնական պրոբլեմի լուծման հարցում (աղ. 26):

2. Երկրորդ խմբի կանայք անհամեմատ ավելի պահպանողական են, կողմ են կնոջ դերի ավանդական ըմբռնմանն ու պահպանմանը, դժգոհ չեն, բայց, թերեւս, գոհ էլ չեն իրենց վիճակից: Նրանց չի հետաքրքրում իրավահավասարությունը, սեռական կյանքի, իրենց վիճակի գնահատման հարցերը, դեմ չեն, բայց և կողմ չեն կնոջ՝ ոչ ավանդական աշխատանքի ձեւերով զբաղվելուն: Կանանց այս խումբը կազմում է մոտավորապես 15%: Այս և նախորդ խմբի կանանց թիվը մոտավորապես 45-50% է: Կարծում ենք, սա խոսում է այն մասին, որ այսօր, նույնիսկ այսպիսի դժվար, երբեմն՝ անորոշ ու անհույս պայմաններում կանայք պատրաստ են ու կցանկանան ներգրավվել Հասարակական ակտիվ, կառուցողական աշխատանքներում, եթե միայն դրանք սկսելու և իրականացնելու նախադրյալներ ստեղծվեն Գյուլմրիում: Այս խումբը խիստ կարևոր է, քանի որ, ըստ էության, նրանք են ապահովում իրենց ընտանիքներում, չրջապատում և ամբողջ քաղաքում դրական իմպուլսների առկայությունը: Եվ հուսադրող է նրանց կազմը՝ մոտավորապես 50%: Նրանց հետ որոշակի աշխատանք կատարելուց հետո, թերեւս, հնարավոր դառնա նրանց մի մասին ընդգրկել երրորդ՝ պասիվ խմբի կանանց շրջանում տարվող աշխատանքներում:

Բերենք այս երկրորդ խմբի պատասխանները հետևյալ հարցերին.

- Ինչպե՞ս եք վերաբերվում Հասարակության մեջ կնոջ և տղամարդու իրավահավասարությանը - անտարբեր՝ 7% (աղ. 21).
- Ինչպե՞ս եք վերաբերվում, երբ կինն զբաղվում է Հասարակական ակտիվ գործունեությամբ - անտարբեր՝ 12% (աղ. 59).
- Ինչպե՞ս եք վերաբերվում կնոջ՝ ոչ ավանդական աշխատանքով զբաղվելուն - անտարբեր՝ 14.6% (աղ. 20).
- Հարցվողների 15.6%-ը դժվարանում է պատասխանել, թե ինքը պատրաստ է ստանալու նոր մասնագիտություն՝ կազմակերպված դասընթացների միջոցով (աղ. 22), իսկ 16%-ն ապագայից ունի անորոշ սպասելիքներ (աղ. 27):

3. Երրորդ խմբում են այն կանայք, որոնք խիստ պասիվ ու անտարբեր են: Այս խումբը Հիմնականում սոցիալական շատ ծանր պայմաններում ապրողներն

են: Երրորդ խմբի կանայք ոչ մեկի հետ հույսեր չեն կապում իրենց վիճակի շտկման համար և կամ էլ՝ միայն պետությունից ու տեղական ինքնակառավարման մարմիններից են ակնկալում աջակցություն: Հասարակական գործունեությունը, իրավահավասարությունը նրանց չեն հետաքրքրում կամ դեմ են դրանց: Կանանց այս խմբի ներկայացուցիչները հիմնականում ոչ մի առաջարկություն, դիտողություն չունեն դրանցած Հարցաթերթիկի առաջարկությունների բաժնում:

- Այս կանայք ապագայից սպասում են միայն վատը՝ 42.8% (աղ. 27).
- Նրանք իրենց հիմնական պրոբլեմի լուծումը կապում են իշխանության գործունեության հետ՝ 59% (աղ.26).
- Իրենց ընտանիքի նյութական վիճակը Համարում են վատ՝ 52.6%-ը, իրենց վիճակից գոհ չեն՝ 64.2% (աղ. 34):

Վերը նշված՝ այս կամ այն խմբին պատկանելը, իհարկե, մասնակի փոփոխություններ է կրում՝ կախված Հարցվողների տարիքից, ամուսնական և աշխատանքային կարգավիճակից (տես՝ Հավելվածը): Արդյունքների համադրումը և վերլուծությունը Հաստատում է, ինչպես ասացինք, որ Գյուլմրիում կանայք լուրջ աջակցության ու պաշտպանության կարիք ունեն: Այս ամենը, ինչպես նաև այն առաջարկությունները, որոնք արվեցին կյո սեղանի մասնակիցների կողմից, հուշում են այն մասին, որ Գյուլմրիում արդեն հասունացած Հարց է սոցիալ-հոգեբանական խորհրդատվական ծառայությունների կազմակերպումն ու իրականացումը՝ որպես սոցիալական լարվածության մեղմացման տարբերակ: Ծիշտ է, այս ուղղությամբ որոշակի աշխատանքներ կատարվել են և առանձին բնագավառներում (իրավաբանական, հոգեբանական և այլ բնույթի խորհրդատվության) լուրջ հաջողություններ կան: Իսկ այսօր արդեն Գյուլմրին ունի նաև մասնագիտական բարձրագույն կրթություն ստացած սոցիալական աշխատանքի մասնագետներ: Եվ կարևորում ենք այս ծառայությունների ու պետական այն կառույցների աշխատանքների համադրումը, որոնք զբաղվում են Հասարակության խոցելի խմբերի, մասնավորապես՝ կանանց խնդիրների լուծման հարցերով: Սա կարևոր է, քանի որ, ինչպես նշեցինք, կանանց մեծ մասն իրենց խնդիրների լուծ-

ման գործում այսօր ակնկալում է պետական կառույցների ավակցությունը: Սա, թերևս, պայմանավորվում է նաև հիմնական պրոբլեմի բնույթով. հարցվողների 69.8%-ը որպես այդպիսին նշել է ֆինանսների բացակայությունը: Երկրորդ տեղում բնակարան, իսկ երրորդում՝ աշխատանք չունենալն է՝ համապատասխանաբար՝ 4.6% և 4% (աղ. 25): Սակայն պետությունից այդպիսի ակնկալիքներ ունեցողների ընդամենը 0.8%-ն է իր հիմնական պրոբլեմը համարում երկրի կամ քաղաքի վիճակը: Ուշագրավ է, որ այս խմբի մեջ բարձր տոկոս են կազմում երիտասարդները՝ 18-28 տարեկանները՝ 1.9%, 29-39 տարեկանները՝ 1% և ծերերը՝ 61 տարեկանից բարձր տարիք ունեցողները՝ 1.2% (աղ. 26):

Կարծում ենք նաև, որ աղետի գոտու բնակչության սոցիալական ապաքինման համար նախ պետք է ընդլայնել խորհրդատվական ծառայությունների ընդգրկման շրջանակները՝ ներառելով սոցիալական մյուս խոցելի խմբերն ու բնագավառները, և երկրորդ՝ տարբերակված մոցեցումներ հանդես բերել: Կանայք առանձնանում են նաև այս առումով, քանի որ նրանց պրոբլեմների լուծումը կամ մեղմացումն ուղղակիորեն դրական անդրադարձ կունենա մյուս խմբերի ու պրոբլեմների վրա:

4. Գործազրկությունը որպես սոցիալական պրոբլեմ. ռիսկի գործոններն ու կանայք որպես ռիսկի խումբ

Աշխատանքի և զբաղվածության ինտիտուտը սոցիալական հիմնական ինտիտուտներից մեկն է, որը կարգավորում է Հասարակության սոցիալ-տնտեսական կյանքը, որի հիմքում ընկած է անձի հիմնական պահանջմունքների բավարարումը: Առաջին հերթին աշխատանքը ապահովում է եկամուտ: Բացի դրանից այն Հնարավորություն է տալիս մարդկանց մասնակցելու Հասարակական կյանքին՝ մեծացնելով նրանց մոտ արժանապատվության զգացումը: Ուստի կարելի է ենթադրել, թե ինչպիսի սոցիալ-հոգեբանական հետևանքներ կարող է ունենալ աշխատանքի բացակայությունը մարդու վրա: Գործազրկությունը, Հանդիսանալով սոցիալական ինդիք, բազմակողմանի վերլուծության կարիք ունի: Այն կարող է Հանդես գալ տնտեսագիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության և սոցիալական քաղաքականության ուսումնասիրության առարկա: Ուստի այս խնդրի լուծումն էլ պահանջում է բազմակողմանի մոտեցում:

Գործազրկությունը կապված է մի շարք այլ սոցիալական պրոբլեմների հետ, ինչպիսիք են աղքատությունը, միգրացիան, Հանցագործությունների, Հիվանդությունների, մահացության, ամուսնալուծությունների աճը: Բացի այդ այն մեծացնում է պետական ծախսերը սոցիալական ապահովության նպաստների վրա և նվազեցնում է եկամուտը Հարկերից:

Այսպիսով, գործազրկությունը որպես սոցիալական պրոբլեմ իր բացասական ազդեցությունն է ունենում ոչ միայն անհատի և նրա մոտ շրջապատի վրա, այլ ամբողջ Հասարակության վրա: (Այսպես, եթե գործազրկության հետևանքով մեծանում է Հանցագործությունների թիվը, ապա այն իր ազդեցությունն է ունենում ամբողջ Հասարակության վրա՝ Հանցագործության գոհ դառնալու ռիսկի մեծացման և Հանցագործության կանխման ուղղությամբ իրականացվող միջոցառումների Համար լրացուցիչ ծախսերի նախատեսման ձևով):

Հայաստանում գործազրկության մասսայական բնույթը պայմանավորված է տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգեբանական գործոններով: Վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցող

սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունները նպաստեցին մասսայական գործազրկության առաջացմանը, որն իր ազդեցությունն ունեցավ Հասարակության գրեթե բոլոր խավերի վրա: Դրանք և գիտական աշխատողներ էին, և որակավորում ունեցող մասնագետներ, և ծառայողներ, և բանվորներ:

Հայաստանում գործազրկությունն ունի ևս մի առանձնահատկություն. այն, որ շատ բարձր է թաքնված զբաղվածության և թաքնված գործազրկության մակարդակը (թաքնված զբաղվածները սեփական բիզնեսով զբաղվողներն են, իսկ թաքնված գործազուկները՝ նրանք, ովքեր գրանցված են որպես աշխատող ինչ-որ ձեռնարկությունում, բայց իրականում չեն աշխատում, ձեռնարկության չգործելու պատճառով): Ուստի զբաղվածության կենտրոնից ստացված տվյալները չեն կարող ներկայացնել իրական գործազրկության մակարդակը Հայաստանում: Ըստ պաշտոնական տվյալների 1999թ-ին գործազուկները եղել են բնակչության 8.9%-ը, կանայք՝ 69.4%-ը, տղամարդիկ՝ 30.6%-ը: 2000 թվականի տվյալներով Գյումրի քաղաքի գործազուկների թիվը 29190 է, որից 20896-ը կանայք են (71 %):

Վերը նշված անհամաչափ թվերը ներկայացնում են միայն այն մարդկանց, ովքեր նախընտրում են գրանցվել: Հնարավոր է, որ կան ավելի մեծ թվով գործազուկ տղամարդիկ, ովքեր գրանցված չեն: Թերևս զբաղվածության կենտրոն տղամարդկանց չգրանցվելու պատճառներից մեկն էլ այն է, որ կենտրոնի միջոցով աշխատանք ձեռք բերելու Հավանականությունը շատ քիչ է, իսկ կանայք, դիմելով զբաղվածության կենտրոն, ավելի շատ ակնկալում են գործազրկության նպաստ ստանալ, քան աշխատանք ձեռք բերել: Այսպիսով, քանի որ զբաղվածության կենտրոնից ստացված տվյալները չեն կարող ներկայացնել գործազրկության իրական թիվն ու սեռային համամասնությունը, ուստի այս Հարցերի ուսումնասիրության առումով կարևորվում են սոցիոլոգիական հետազոտությունները:

Գործազրկությունը տարբեր սոցիալական խմբերի վրա միևնույն ազդեցությունը չի ունենում: Գոյություն ունեն ռիսկի խմբեր, որոնք չեն կարող լիարժեքորեն մրցունակ լինել աշխատանքի շուկայում և որոնցում ավելի մեծ է գործազուկ դառնալու Հավանականությունը: Դրանք են ծերերը՝ իրենց

էներգետիկ ցածր պոտենցիալի պատճառով, երիտասարդները՝ փորձի պակասության պատճառով, կանայք՝ իրենց ֆիզիոլոգիական կառուցվածքի՝ երեխա ունենալու և հետագայում նրա խնամքով զբաղվելու պատճառով, ինչպես նաև մարդիկ, ովքեր ունեն ցածր որակավորում և կրթական ցածր մակարդակ, հաշմանդամները, նաև մարդիկ, ովքեր ապրել են հոգեբանական ստրեսներ և ունեն սոցիալական միջավայրին ազատացրած պարզ պարզումներ:

Հոգեբանական ստրեսներ և սոցիալական միջավայրին ազատացրած պարզումներ ունեցել է մեր հասարակության գրեթե յուրաքանչյուր անդամ: Երկրաչարժն՝ իր հետ տրամամատիկ հետևանքներով և սոցիալ-տնտեսական փոփոխությունները լուրջ հոգեբանական ստրեսներ էին, որոնց ենթարկվեց Գյուլմրի քաղաքի ամբողջ բնակչությունը:

Տարիքի գործոնը նույնպես կարևորվում է գործազրկության ռիսկի համար, որը պայմանավորված է ոչ միայն էներգետիկ պոտենցիալով և փորձով, այլ նաև սոցիալական միջավայրին հարմարվելու ընդունակությամբ: Այս առումով մեր հասարակությունում ծերերն ավելի շատ են եթեկա գործազրկության ռիսկին, քան երիտասարդները, որովհետև նրանք ունեն փոփոխվող սոցիալական միջավայրին հարմարվելու և արժեքային վերազնահատումների լուրջ պրոբլեմ: Երիտասարդներն ավելի ճկուն են ազատացրած պարզումի առումով, զերծ դոգմատիկ մտածելակերպից, ավելի պատրաստակամ են նոր մասնագիտություն և հմտություններ ձեռք բերելու առումով և իրենց պրոբլեմի լուծումը ավելի շատ կապում են իրենց ուժերի հետ: Ըստ տարիքի տարբերվում են նաև արժեքային կողմնորոշումներն ու աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքները: Այդ են վկայում թե՛ պաշտոնական տվյալները և թե՛ մեր հետազոտության արդյունքները:

Ըստ պաշտոնական տվյալների 1999 թվականին Հայաստանում գրանցված գործազուրկների 36.8%-ը մինչև 30 տարեկան է, իսկ 54.7%-ը՝ 30-50 տարեկան, իսկ 2000 թ-ին Գյուլմրի քաղաքում գրանցված գործազուրկ կանանց 23.7 %-ը մինչև 30 տարեկան է, իսկ 69.5 %-ը՝ 30-50 տարեկան:

Ըստ մեր հետազոտության արդյունքների, որքան մեծանում է տարիքը, այնքան նվազում է նոր մասնագիտություն ստանալու պատրաստակա-

մությունը: Այսպես, եթե 18-28 տարեքային խմբի 47.2%-ն է պատրաստակամ ստանալու նոր մասնագիտություն, ապա 51-61 տարեկանների՝ 14.3 %-ը և 61-ից բարձրի՝ 1.2%-ը(աղյուսակ 22):

Իրենց պրոբլեմի լուծումը սեփական ուժերի հետ նորից ամենաշատը կապում են երիտասարդները՝ 26.9%-ով: Տարիքի մեծացման հետ նվազում է պրոբլեմի լուծումը սեփական ուժերի հետ կապելու ցուցանիշը և աստիճանաբար աճում է այն պետական ու տեղական իշխանությունների գործունեության հետ կապել (աղյուսակ 26):

Աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը նույնպես փոխվում է տարիքի հետ: Տարիքի մեծացման հետ աշխատանքին որպես ապրուստի միակ միջոց վերաբերվելու ցուցանիշը մեծանում է՝ եթե 18-28 տարեկանների մոտ այն 46.3% է, ապա 61-ից բարձրների մոտ՝ 78%, համապատասխանաբար նվազում է աշխատանքին՝ որպես մասնագիտական ընդունակությունների գրավորման միջոց վերաբերվելու ցուցանիշը՝ եթե 18-28 տարեկանների մոտ այն 41.7% է, ապա 61-ից բարձրների մոտ՝ 18.3% (աղյուսակ 19):

Աշխատանքի բացակայությունը որպես պրոբլեմ ավելի շատ գնահատվել է 29-39 տարիքի մոտ՝ 10.3%-ով (աղյուսակ 25): Ինչպես տեսնում ենք երիտասարդներն ավելի մրցունակ են աշխատանքային շուկայում՝ հաշվի առնելով վերը նշված առանձնահատկությունները: Բայց երիտասարդն ավելի ցավալի է տանում անգործությունը, զգում է իրեն հասարակությունից մերժված, հիասթափված, որը տանում է այդ հասարակության արժեքների մերժման և սոցիալական օտարացման: Նրանց մոտ արժաքազրկվում է նաև կրթություն ստանալու կարևորությունը:

Կրթության գործոնը նույնպես շատ կարևորվում է գործազրկության ռիսկի համար: Այն մարդիկ, ովքեր ունեն մասնագիտական ցածր որակավորում, ավելի շատ են ենթակա գործազրկության ռիսկին: Այդ են վկայում թե՛ պաշտոնական տվյալները և թե՛ հետազոտության արդյունքները: Ըստ պաշտոնական տվյալների 1999 թ-ին գրանցված գործազուրկների 36.8%-ը ծառայող են, 63.2%-ը բանվոր, 12.3%-ը բարձրագույն կրթությամբ, 23.8%-ը՝ միջնակարգ մասնագիտական:

Հետազոտության արդյունքների համաձայն գործազուրկ կանանց 41%-ը ծառայող է եղել, 22.7%-ը՝ որակավորում ունեցող մասնագետ և 32.9%-ը՝ բանվոր, 7.5%-ը ունեն տարրական կրթություն, 34.4%-ը՝ միջնակարգ, 37.6%-ը՝ միջնակարգ-մասնագիտական, 3.2%-ը թերի բարձրագույն և 17.2 %-ը՝ բարձրագույն: Տարրական կրթություն ունեցողների 8.4%-ը աշխատանք ունեն, 19.4%-ը գործազուրկ են, միջնակարգ կրթություն ունեցողների 6.5 %-ն է աշխատում, 20.6 %-ը՝ գործազուրկ է, միջնակարգ մասնագիտականներինը համապատասխանաբար՝ 31.4% և 27.1%, թերի բարձրագույններինը՝ 17.5% և 7.5%, իսկ բարձրագույններինը՝ 55% և 12.4% (աղյուսակ 45):

Ե՛վ պաշտոնական տվյալները, և՛ Հետազոտության արդյունքները այնուամենայնիվ ցույց են տալիս, որ Հայաստանում գոյություն ունի մարդկանց մի խումբ, ովքեր ունենալով բարձրագույն կրթություն և նախկինում ծառայողի բարձր դիրք, այժմ գործազուրկ են: Այստեղ նույնպես առկա է սոցիալ- հոգեբանական ազդապատգիայի լուրջ պրոբլեմ: Բանն այն է, որ այդ մարդիկ ոչ միայն կորցրեցին իրենց աշխատանքային հմտությունները, այլև չկարողացան յուրացնել նորերը: Ծանոթ չլինելով շուկայական հարաբերություններին՝ նրանք չկարողացան գործել շուկայական տնտեսության պայմաններում և լրացրեցին գործազուրկների ստվար շարքերը:

Սեռը նույնպես կարևոր գործոն է գործազրկության համար, և այդ առումով կանայք շատ ավելի խոցելի են: Դրա պատճառը ոչ միայն նրանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունն է, այլ նաև սոցիալական արժեքներն ու նորմերը և խորակա- նությունը աշխատանքի շուկայում: Չնայած նրան, որ վերջին տարիներին երկրի սոցիալ- տնտեսական վիճակը իր հետ առաջ բերեց դերային ու արժեքային փոփոխություններ և, հայկական ընտանիքի նյութական ապահովման ավանդական ֆունկցիան աստիճանաբար սկսեցին իրականացնել կանայք, այնուամենայնիվ Գյումրի քաղաքի կանանց 52.2%-ը դեռևս գտնում է, որ ընտանիքի նյութական ապահովման հարցերով պետք է զբաղվի տղամարդը և միայն 2.8%-ը՝ կինը, նրանց արժեքային կողմնորոշումներն ավելի շատ ուղղված են ընտանեկան կենցաղին՝ 73%, իսկ դերային կողմնորոշումները՝ մոր դերին՝ 67.6 % (իհարկե այս ցուցանիշները փոփոխվում են տարիքի

հետ՝ տարիքի մեծացման հետ ցուցանիշները մեծանում են): Ուստի կարելի է ենթադրել, որ Գյումրի քաղաքի կանանց արժեքային ու դերային կողմնորոշումները նրանց ավելի խոցելի է դարձնում աշխատանքի շուկայում:

Կատարվում է արդյոք աշխատանքի շուկայում խտրականություն կանանց նկատմամբ, թե՛ ոչ, ավելի պարզ ցույց կտան հետագա ուսումնասիրությունները, սակայն վիճակագրության նախարարության տվյալները ցույց են տալիս, որ զբաղվածության կենտրոնների միջոցով վարձված տղամարդկանց թիվը կազմում է գրանցվածների ընդհանուր թվի 4.4 %-ը, իսկ կանանց համար այդ թիվը 2.2 % է:

Նկատի ունենալով, որ զբաղվածության կենտրոններ դիմում են ավելի շատ կանայք, քան տղամարդիկ և Հայաստանում գրանցված գործազուրկների գրեթե 70%-ը կանայք են, ապա տարբերությունը մատնանշում է, որ անհավասարություն որոշ չափով գոյություն ունի:

Ըստ Հետազոտության արդյունքների հարցվող կանանց 27%-ը աշխատող է, 26.2%-ը՝ տնային տնտեսուհի և 18.6%-ը՝ գործազուրկ: րանցված են գործազուրկների միայն 41.9%-ը: Սրա հիմական պատճառը այն է, որ գրանցման գործողությունը բյուրակրատական է, իսկ դրամական նպաստները սիմվոլիկ են՝ ամսական 2340-3900 դրամ: Սրա հետևանքով գրանցվելու շարժառիթները փոքր են:

Հարցվող գործազուրկներից փորձել են գտնել աշխատանք 61.3 %-ը, որոնցից զբաղվածության կենտրոն դիմել են 10.5%-ը, ամեն ինչ արել են, բայց մերժվել են 61.4 %-ը և փնտրում են 10.5%-ը, չփորձելու պատճառաբանությունները 41.7%-ով աշխատանքի բացակայությունն է, իսկ 22.2 %-ով ցանկության բացակայությունը: Ըստ էության, չփորձողների այդ 22.2%-ն իրենցից ներկայացնում են կամավոր գործազուրկների խումբը (աղյուսակ 50, 51):

Հարցվող գործազուրկ կանանցից պատրաստ են աշխատելու ոչ իրենց մասնագիտությամբ 86%-ը, իսկ նոր մասնագիտություն ստանալու՝ միայն 27.9 %-ը:

Նոր մասնագիտություն ստանալու պատրաստակամություն ունեցող գործազուրկ կանանցից 34.6%-ը գերադասում է համակարգչային գործ, իսկ 15.4%-ը պատրաստ է ստանալու ցանկացած մասնագիտու-

թյուն (աղյուսակ 42): Անպատրաստակամությունը բացատրվում է հիմնականում տարիքով՝ 46.8%, ցանկությունը՝ 19.2%, ժամանակով՝ 17% և ֆինանսով՝ 8.5% (աղյուսակ 43): Ըստ էության գոյություն ունի կապ նոր մասնագիտություն ստանալու անպատրաստակամության և ոչ իրենց մասնագիտությամբ աշխատելու պատրաստակամության միջև, որը էականորեն կապված է տարիքի հետ, քանի որ անպատրաստակամությունը 46.8 %-ով պատճառաբանվում է տարիքով: Ուստի կարելի է եզրակացնել, որ Գյումրի քաղաքի երիտասարդ գործազուկ կանայք ավելի պատրաստակամ են ստանալու նոր մասնագիտություն, իսկ Համեմատաբար տարեց կանայք՝ ոչ իրենց մասնագիտությամբ աշխատելու, և քանի որ երիտասարդ գործազուկների թիվը ավելի փոքր է (23.7%), քան տարեցներինը (76.3%), կարելի է բացատրել ոչ իրենց մասնագիտությամբ աշխատելու և նոր մասնագիտություն ստանալու պատրաստակամության ցուցանիշների այդքան մեծ տարբերությունը:

Սրա հիման վրա, որպես Գյումրի քաղաքի կանանց գործազուկության պրոբլեմի լուծման տարբերակ կարելի է համարել մասնագիտական դասընթացների կազմակերպումը երիտասարդների համար և հնարավոր աշխատատեղերի ստեղծումը Համեմատաբար տարեցների համար:

Սակայն գործազուկության նվազեցումը պայմանավորված է ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալ-հոգեբանական գործոններով: Բանն այն է, որ գործազուկությունը ունենում է լուրջ հոգեբանական ազդեցություն, որի ցավալի հետևանքները լինում են սոցիալական մեկուսացումը, օտարացումը, սեփական ուժերի նկատմամբ անվստահությունը, և ապագայի

նկատմամբ հոռետեսությունը: Այդ են վկայում նաև Հետազոտության արդյունքները, Համաձայն որոնց աշխատանքի նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքով և նոր մասնագիտություն ստանալու պատրաստակամությամբ գործազուկները ավելի շատ մոտ են տնային տնտեսուհիներին՝ տնտեսապես ոչ ակտիվ խմբին (աղյուսակներ 28, 29, 31):

Հետազոտության արդյունքները ցույց են տվել նաև, որ սպասումներն ապագայից ամենահոռետեսականը գործազուկների մոտ է՝ 44.1%, տնային տնտեսուհիների մոտ ավելի բարձր է անորոշ սպասումների ցուցանիշը՝ 41.2%, իսկ աշխատողների մոտ՝ լավատեսականինը՝ 40 % (աղյուսակ 46):

Գործազուկների նման հոռետեսական Հայացքները և պասիվությունը՝ աշխատանք փնտրելու և նոր մասնագիտություն ստանալու առումով, ունեն սոցիալական հիքեր՝ գործազուկության հետևանք են:

Գործազուկների սոցիալ-հոգեբանական հետևանքների վերացման և նրանց ակտիվ գործունեության մղելու առումով կարևորվում է հոգեբանների և սոցիալական աշխատողների դերը: Ուստի սոցիալական քաղաքականության մշակման և գործազուկության նվազեցման ուղղությամբ ծրագրերի իրականացման ժամանակ չպետք է անտեսվի նրանց մասնակցության ապահովումը:

5. Հասարակական կազմակերպությունները

Հասարակության զարգացման տարբեր շրջափուլերում ցանկացած երկիր ակամա Հայտնվում է կյանքի արմատական տեղաշարժերի ու հոգևոր արժեքների վերաիմաստավորման ճանապարհին: Վերջին տասնամյակում Հայաստանը գտնվում է սոցիալ-տնտեսական և քաղաքական խոր փոփոխությունների ու ցնցումների շարունակվող ընթացքում: Այս պարագայում առաջացած հիմնախնդիրները լուծելու համար կարևորվում է Հասարակության մեջ կանանց դերը: Գաղտնիք չէ, որ ցանկացած երկրի տնտեսական ու մշակութային հզորությունը հենվում է քաղաքականության վրա, իսկ վերջինս ռազմական հզորություն ու անկախություն է ձեռք բերում հիմնականում գինված պայքարի միջոցով: Բնականաբար նմանատիպ Հարցերը լուծվում են ուժեղ սեռի միջոցով և քաղաքականության մեջ կինը մղվում է երկրորդ պլան: Բայց պետք է հիշել, որ զարգացման տարբեր փուլերում ժողովրդավարության բարձր մակարդակ ապահովելու համար կանայք դրսևորում են պոտենցիալ մեծ հնարավորություններ և բնությունից սրված նուրբ ու խորթափանց դիվանագիտությամբ շատ դեպքերում կանխում են կոնֆլիկտների հետագա զարգացումը: Ի վերջո, առավելապես կանայք են հակված դեպի հոգատարություն ու խաղաղությունը և, սղամարդկանց համեմատ պակաս ագրեսիվ լինելով, ավելի են հակված դեպի խաղաղության մշակույթը՝ հանդուրժողականությունը:

Հայկական Հասարակությունը կնոջ իրավունքներն ու ազատությունները վավերացրել է պետական օրենսդրությամբ՝ դեռևս միջնադարում: 1184թ. Մխիթար Գոշի Դատաստանագիրքում, որը գործել է Հայկական գաղթօջախներում ընդհուպ մինչև 19-րդ դարը, արտահայտվել են առաջադեմ գաղափարներ, բավականին մեծ տեղ է հատկացվել կանանց իրավունքների պաշտպանությանը: Դատական պատասխանատվության է ենթարկվել այն սղամարդը, ով հանդգնում էր չհարգել կնոջ իրավունքները: Իսկ Հայ կինն իրոք արժանի է հարգանքի և մեծարանքի նաև այսօր: Եվ այսօր այդ ամենի կրկնակիին արժանի են աղետի գոտու կանայք, ովքեր զորավիգ ու նեցուկ եղան իրենց ընտանիքներին ու ամուսիններին հետադեպյան այս վատթարագույն տարիներին: Նրանց

հիմնախնդիրները համառոտ են լուծում չեն գտնում. դեռ տխուր են մեր կանանց հայացքները և աշխատանք ու նորմալ ընտանեկան կենցաղ վերագտնելու վերջին հույսը կարծես ուզում է լքել նրանց: Ահա թե ինչու կարևորվում է կրկին համախմբելու և միասնական դիքերից նայելու, վերլուծելու չկարգավորվող և հեռանկարներ չուրվագծող մեր այսօրը:

Իհարկե առաջացած շատ խնդիրների լուծմամբ պետական կառույցներից բացի, զբաղվում են նաև ոչ քիչ թվով հասարակական կազմակերպություններ: Կատարված սոցիոլոգիական հարցումը նպատակ էր հետապնդում կրկին համոզվելու, որ լուծում պահանջող պրոբլեմները բավականին շատ են:

Կնոջ՝ Հասարակական ակտիվ գործունեությամբ զբաղվելու հարցին դրական են վերաբերվում հարցվողների 73.4%: Ցավոք, այսօր կանանց պրոբլեմներով զբաղվող կազմակերպություններում ընդգրկված են հարցվող կանանց ընդամենը 6.4%-ը (աղյուսակ 54): Կանանց պրոբլեմներով զբաղվող կազմակերպությունների աշխատանքներին մասնակցողների մեջ հիմնականում ընդգրկված են 29-39 տարեկան կանայք՝ 2.4% (աղյուսակ 54): Այս ոլորտում առանձնանում են բարձրագույն կրթությամբ կանայք, որոնց թիվը կազմում է 3% (աղյուսակ 55): Հարց է առաջանում, թե ինչո՞ւ է պայմանավորված նման անհամապատասխանությունը: Հարցվողների մի մասը գտնում է, որ անհրաժեշտ է ավելի հաճախ ու ճշգրիտ լուսաբանել կանանց հուզող խնդիրները՝ միաժամանակ դիտարկելով դրանք անցումային փուլին բնորոշ տեսանկյունից: Հարցվողների 88.6%-ը անբավարարություն է արտահայտել կանանց խնդիրները լուսաբանող ՁԼՄ-ների հաղորդումներից (տես՝ Հարցման արդյունքները, հարց 10-րդ): Միաժամանակ հարցվողների կողմից առաջարկվում է կազմակերպել կանանց նվիրված լավագույն վերլուծական ու լրատվական հաղորդաշարերի մրցույթներ և նմանատիպ այլ միջոցառումներ: Գուցե բավարար լուսաբանման դեպքում վերը նշված 73.4% կազմող խմբի մի մասը կընդգրկվի հասարակական ակտիվ աշխատանքներում:

Ինչևէ, իրենց փաստարկներն ու պատճառաբանությունները լրատվության միջոցները կապում են ֆինանսների բացակայության և ոչ թե իրենց՝ կանանց հարցերի նկատմամբ անուշադրության հետ:

Սա, իհարկե, ընդունելի փաստարկ է, բայց այս պարագայում էլ անհրաժեշտ է ուղիներ փնտրել: Չէ՞ որ այսօր շատ հասարակական կազմակերպություններ սկսել են ուշադրություն դարձնել կանանց հիմնախնդիրներին, բայց արդյունքում չեն ուրվագծվում առկա շոշափելի փոփոխություններ: Այդ մասին է վկայում այն փաստը, որ հարցվողների ընդամենը 0.2%-ն է իր հիմնական պրոբլեմների լուծման համար ակնկալում հասարակական կազմակերպությունների աջակցությունը (աղյուսակ 26): Այդ խմբի մեջ մտնում են միայն բարձրագույն կրթություն ունեցողները (աղյուսակ 41): Այս թիվը խորհել է տալիս և կրկին փաստում, որ լրատվության միջոցների կողմից անբավարար են լուսաբանվում ներկայացվող բնագավառի խնդիրները: Եվ սա այն դեպքում, երբ անցումային դժվարին այս փուլում հաճախ ենք լսում գեներալային վերլուծությունների մասին: Գուցե այս դեպքում օգնի նաև հարցվողների ստվար մասի կարծիքը, որը հնչում է որպես պահանջ. հասարակական ամենատարբեր կազմակերպությունները ուժերի ու հնարավորությունների սահմաններում համագործակցեն, կատարած որոշակի դրական աշխատանքներ համատեղ քննարկեն, որպեսզի նրանց գործունեության շոշափելի արդյունքները տեսանելի լինեն բոլորին, անտարբերության և անիրազեկության վարագույրը բացվի և արդյունքում խոստահենք Կոելովի հայտնի առակի հերոսներին նմանվելուց:

Այսօր անցումային դժվարին փուլում դեպի ժողովրդավարություն տանող ճանապարհի փնտրտուքում մեր ղեկավար այրերը հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում իրենց են վերապահում միանձնյա գերակայությունը՝ ստիպելով հիշեցնել, որ մեր հասարակության առջև ծառայած բազում օրախնդիր ու կենսական հարցերում կանանց մասնակցությունը ոչ թե ցանկալի է, այլ՝ պարտադիր: Դա են հաստատում նաև մեկ այլ հարցման արդյունքները (տես՝ «Կանայք զարգացման մեջ, ժամանակակից հասարակության գեներալային հիմնահարցեր, Երևան, 1999, էջ277), որոնց համաձայն հասարակական կազմակերպությունների գործունեությունը առաջիկայում կարող է նպաստել կանանց վիճակի բարելավմանը: Այդպես է կարծում հարցվողների 63.25%-ը: Հուսադրող է նաև հարցվածների 81.60%-ի այն պատասխանը, որ կինը միշտ պատրաստ պիտի լինի պաշտպանելու իր իրավունքներն ու արդարացի-

ություններ: Նույն աղբյուրի համաձայն, Հայաստանում գոյություն ունեցող կանանց շարժման արդյունավետությունը հետևյալ բնագավառներում կազմում է համապատասխանաբար.

- Հասարակության քաղաքական հիմնախնդիրների լուծման գործում – 50.85%,
- Հասարակության տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում – 36.84%,
- Հասարակության սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում – 29.31% (նույն տեղում, աղյուսակ 7):

Նկատի ունենալով վերը նշվածը՝ հասկանալի է դառնում այն առաջարկը, որ պետք է ամրագրել կին գործիչների որոշակի տոկոսի պարտադիր առկայությունը պետության օրենսդիր և գործադիր մարմիններում: Միայն այդ դեպքում ավելի հաճախ բարձր ամբիոններից կհնչեն հասարակությանը և ընտանիքի պահպանությանը ուղղված կարևոր հարցադրումները:

Կանայք այս հարցում դեռևս լավատես են. այդ են վկայում հետազոտման արդյունքում կնոջ և տղամարդու հավասարության հարցին դրականորեն արձագանքած 75.2% հարցվողները (աղ.21): Հետևաբար, ուշ է և կարելի է կառավարման բարձրագույն օղակներում գոնե մասնակի ներդաշնակություն ստեղծել (ի տարբերություն՝ ՀՀ ներկա կառավարության, որի կազմում բացակայում են կանայք և ՀՀ ԱԺ-ի, որտեղ կանանց թիվը խիստ սահմանափակ է): Եվ սա այն դեպքում, երբ հայ կինն օժտված է մեծ մտավոր ներուժով և կրթական բարձր ցենզով: Ցանկալի է, որ ԱԺ-ում լինեն աղետի գոտուց կին պատգամավորներ, որպեսզի նրանց հուզող և հրատապ լուծում պահանջող բազում հարցադրումներ ժամանակին հնչեն բարձր աստիճաններում:

Մեկ տասնամյակ առաջ Գյումրին Հայաստանի ամենագեղեցիկ և տնտեսապես հարուստ քաղաքներից էր: Բայց այսօր, գտնվելով աշխարհագրական նույն հայրենիքում, Գյումրի ու Երևանը խիստ տարբերվում են թե մեր, և թե օտարների աչքում՝ կարծես պատկանելով քաղաքակրթության տարբեր մակարդակների: Գաղտնիք չէ, որ գյումրեցի կինն առավել զրկված և հոգաչառ է: Պատճառներից առաջինը բնական աղետն էր, որը նրան զրկեց բնակարանից ու

աշխատատեղից, և երկրորդ պատճառը, բնականաբար, շարունակվող և դեռևս չկարգավորվող սոցիալատնտեսական փոփոխություններն են: Արդյունքում մեր կանայք այսօրվա իրականությունն արտացոլող հայելին են դարձել: Բնականաբար, նշված հարցադրումների լուծման գործում մեծ է հասարակական կազմակերպությունների բազմակողմանի և արդյունավետ աշխատանքների ծավալումը կանանց շրջանում:

Ի վերջո, բոլորիս նպատակը մեկն է՝ նեցուկ լինել մեր հասարակությանը ժողովրդավարության կայացման դժվարին ճանապարհին, կրկին հաստատելով այն միտքը, որ կնոջ վիճակով կարելի է դատել ցանկացած հասարակության քաղաքակրթվածության մակարդակի մասին:

6. Կանանց վիճակի բարելավում, կանանց նկատմամբ խտրականության վերացում

Ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն կառուցելիս կանանց վիճակի բարելավմանն ու նրանց նկատմամբ խտրականությունից վերացմանն ուղղված գլխավոր նպատակը պետք է հանդիսանա կանանց լիակատար և իրավահավասար մասնակցության ապահովումը ՀՀ քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր կյանքին: ՀՀ օրենքներում սահմանված են տղամարդկանց և կանանց հավասար իրավունքներ և ազատություններ: Սակայն հնարավորությունների իրականացման ընթացքում չի պահպանվում ռեալ իրավահավասարությունը: Այսպես, խիստ ցածր է կանանց տոկոսը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, կանայք գրեթե չեն մասնակցում բանկային, հարկային կամ մաքսային մարմինների կառավարմանը: Կառուցվածքային փոփոխությունները, որոնք տեղի են ունենում շուկայական տնտեսությանն անցնելու գործընթացում, առաջին հերթին ազդում են աշխատանքի շուկայում կանանց հնարավորությունների վրա: ՀՀ-ում գրանցված գործազուրկների թվում կանայք կազմում են 71,5 %, իսկ Գյումրիում՝ 70%, մոտ 20896 կին (2000թ-ի դրությամբ ըստ Գյումրու Աշխատանքի և զբաղվածության տարածքային կենտրոնի տված տեղեկատվության): Իսկ 1999թ-ի դրությամբ ըստ ՀՀ Վիճակագրության և պետական ռեգիստրի Շիրակի մարզային վարչության տվյալների գործազուրկ կանանց թիվը կազմում է 22235, տեսակարար կշռով՝ 69,6%:

Գյումրիում կատարված հարցումներից պարզվել է, որ ազազայի նկատմամբ լավատեսորեն են վերաբերվում հիմնականում 18-39 տարեկան կանայք և աղջիկները՝ մոտ 38,2% (տես աղյուսակ 27): Հանրապետության բնակչության 51,8% կանայք են, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների մեջ նրանք կազմում են շուրջ 60 %:

Կանանց նկատմամբ խտրականությունն առկա է կենսագործունեության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ աշխատանքում և ընտանիքում: Ըստ Շիրակի մարզի ՔԿԱ տարածքային բաժնի տվյալների 2000թ. առաջին եռամսյակում գրանցվել է 607 ծնունդ, 217 ամուսնություն, 21 ամուսնալուծություն, 475 մահ, որից՝ 212-ը կին: Իսկ կանանց ամուսնության

տարիքային խմբերի նկարագիրը 2000թ. առաջին եռամսյակում հետևյալն է՝

- 17 - 20 տարեկան՝ 95,
- 21 - 25 տարեկան՝ 93,
- 26 - 30 տարեկան՝ 15,
- 31 - 50 տարեկան՝ 13,
- 51 և բարձր՝ 1:

Կանանց զբաղվածությունը մեծ է կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության և մշակույթի ոլորտներում: Հանրապետությունում գործում են կանանց երեք հասարակական-քաղաքական և շուրջ 51 հասարակական կազմակերպություն, իսկ Շիրակի մարզում՝ մոտ 10 հասարակական կազմակերպություն:

Աշխատանքի բնագավառում անբավարար սոցիալական և իրավական պաշտպանվածությունը, անվտանգության նորմերի և կանոնների, աշխատանքային պայմանների ու հիգիենայի պահպանման նկատմամբ վերահսկման անհրաժեշտությունը պետք է դրական անդրադառնա աշխատող կանանց առողջության վրա: 1988 թվականի ավերիչ երկրաշարժի, սահմանամերձ շրջաններում գինված բախումների, էներգետիկ ճգնաժամի և շրջափակման ժամանակառաջացած դժվարությունները էլ ավելի բացասաբար անդրադարձան հատկապես կանանց առողջության վրա:

Համեմատելով «Հոգեկան առողջության կենտրոն» ՊՓԲԼ-ի ներկայացրած 1989-1999թթ-ի տեղեկատվությունը, հանգում ենք այն եզրակացության, որ 1999թ-ին հաշվառման վերջված հիվանդների թիվը աճել է, ըստ որի հոգեբուժական հիվանդների թիվը կազմում է 54, նարկո հիվանդների թիվը՝ 76, ներոզով հիվանդների թիվը՝ 152: Ընդ որում նույն աճն է զգացվել նաև այդ նույն հիվանդություններով ատացիոնար բուժված հիվանդների մոտ: 1999թ-ի դրությամբ հոգեբուժական հիվանդների թիվը կազմում է 258, որից կին՝ 106, ներոզով հիվանդների թիվը՝ 136, որից կին՝ 72: Հիվանդության առաջացման նպաստող հանգամանքներն են՝

- ա) դաստիարակության մեջ սխալ մեթոդների կիրառումը,
- բ) ազգային սովորույթները,

դ) հոգեբանական վերականգման անլիարժեքությունը,

դ) թերի, աղավաղված ինֆորմացիան պրոբլեմի վերաբերյալ,

ե) զբաղվածություն, աշխատանք չունենալը և սոցիալական ծանր պայմանները: Ընդ որում բոլոր հիվանդներն օգտվել են անվճար բժշկական ծառայությունից, բացի ներդրով հիմնադրներից, որոնք նույնպես կարիք ունեն անվճար բժշկական օգնություն:

Սեփական գործ հիմնելու միջոցով ինքնազբաղվածությունն ապահովելու կանանց հնարավորությունները ցածր են, քանի որ նրանց իսկ կողմից նկատվում է որոշակի կաշկանդվածություն:

Ձնայած որ վիճակագրության բացակայությունը հնարավորություն չի ընձեռում ունենալ իրական պատկերն այնպիսի սոցիալական երևույթի, ինչպիսիս մարմնավաճառությունն է, որը, ցավոք առկա է Հանրապետությունում և օր-օրի էլ ավելի է ցայտուն դրսևորվում մեր հասարակարգում, այնուամենայնիվ ՁԻԱՀ-ով վարակման, ծխախոտի, թմրանյութերի օգտագործման վտանգից պաշտպանվելու ուղղությամբ պետք է համակարգված միջոցառումներ իրականացվեն, քանի որ Գյումրիում՝ վերջին երեք տարում զգացվում է պտուկություն, մարմնավաճառության, կավատության (20-45 տարեկան հասակի կանայք) և թմրամոլության, թմրաբիզնեսի աճ:

Ըստ Գյումրու ՆԳ բաժնի տված տեղեկատվության 13.06.2000թ-ի դրությամբ արձանագրվել է 377 դեպք, որից 4-ն իրագործվել է կանանց կողմից, այսինքն՝ արձանագրված ընդհանուր դեպքերի 1,1%-ը, հիմնականում 25-45 տարեկային ցեղի: Իսկ թմրամոլության և թմրաբիզնեսին առնչվող հանցագործություններում արձանագրվել է 11 դեպք, որից՝ 2 կին (ՀՀ Քր. օր. 229 հոդվածի 2 մաս): ՀՀ Քր. օր. 109 հոդվածի հատկանիշներով 2000թ-ին 4 բռնության դեպք է արձանագրվել կանանց նկատմամբ, որոնց տարիքը կազմում է 30-45 տարեկան, դրդապատճառը՝ կենցաղային: ՀՀ Քր. օր. 112 հոդվածով որակավորվող բռնաբարության դեպքեր 2000թ-ին չեն արձանագրվել:

Բուհերում պետական պատվերի կրճատումը բացասաբար անդրադարձավ սոցիալապես անպաշտպան խավի և, հատկապես, կանանց կրթությունն ստանալու

հնարավորությունները: Գյումրու վայրերում նկատվում են միջին դասարանների աղջիկների կրթօջախից դուրս գալու դեպքեր: Թափառաչվել և մուրացիկ երեխաների մեջ քիչ չեն աղջիկները: Վերադաստիարակման գործառույթների հետ կապված, որոշ դեպքերում, խախտվում է կանանց ուսման անընդհատությունը: Դրա հետևանքով սահմանափակվում են կանանց մասնագիտական բարձր որակավորում ստանալու և հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում համապատասխան դիրք գրավելու հնարավորությունները:

Անբավարար են կանանց գիտելիքներն իրենց իրավունքների հարցում, որը հիմնականում պայմանավորված է կրթական համակարգում իրավական հարցերի ուսուցման ցածր մակարդակով:

Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանում 2000թ. առաջին կիսամյակում դատավճիռ է կայացվել 206 անձի նկատմամբ, որից 11 կին:

Կանանց Հայցադիմումներով ամուսնալուծությունների թիվը կազմել է 34:

Կանանց նկատմամբ կատարած հանցագործությունների համար դատապարտվել են 15 անձ:

Կանանց հիմնահարցերը հասարակությանը բավարար չափով ներկայացված չեն: Ըստ էության, բացակայում է այդ խնդրի նպատակաուղղված քարոզչությունը (տես ՀՀ Կառավարության 15.04.1998թ. թիվ 242 որոշումը):

Կանանց իրավունքներին վերաբերող իրավական ակտերն են՝

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948թ.),
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (1979թ.),
- Տղամարդկանց և կանանց նույնարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրության մասին կոնվենցիան (1951թ.),
- Աշխատանքի և զբաղվածության խտրականության մասին կոնվենցիան (1958թ.),
- Ամուսնության թույլտվության, նվազագույն տարիքի և ամուսնությունների գրանցման վերաբերյալ կոնվենցիան (1962թ.),
- Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան:

- Ելնելով Հանրապետության արդի սոցիալ-տնտեսական իրավիճակից և հաշվի առնելով կանանց Հիմնախնդիրների լուծման դերը և ղեկավարվելով ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականությունը բոլոր ձևերի վերացման մասին» 18.12.1979թ. կոնվենցիայով, որն ուժի մեջ է մտել 03.09.1981թ-ին, ՀՀ ԳԽ-ի «Կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականություն վերացման մասին կոնվենցիային միանալու մասին» 09.06.1993թ-ի թիվ ՀՆ-0849-1 որոշմամբ, Կանանց IV Համաշխարհային Համաժողովի (Պեկին, 1995թ.) Հանձնարարականներով, առաջարկում ենք իրականացնել միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն կանանց նկատմամբ խտրականության վերացմանը և կանանց վիճակի բարելավմանը.
- 1. պահպանելով ազգային սովորույթները՝ մի կողմ դնել նախապաշարունակները, որոնք հիմնված են սեռերից մեկի ոչ լիարժեքության կամ առավելության գաղափարի հիման վրա,
- 2. կրթօջախը վաղաժամ թողած աղջիկների և կանանց համար ծրագրերի մշակում, ուսումնական ծրագրերում առանձնացնել թեմաներ սեռական դաստիարակության, հասարակական կյանքում կանանց դերի բարձրացման իրավահավասարության մասին,
- 3. կրթական բնույթի հատուկ տեղեկատվությունից օգտվելու մատչելիությունը ընտանիքների առողջության և բարեկեցության ապահովմանը աջակցելու նպատակով,
- 4. տղամարդկանց և կանանց համահավասարության հիման վրա հավասար իրավունքներ ապահովվեն, մասնավորապես՝ աշխատանքային (աշխատանքի վարձավելիս միատեսակ չափանիշների կիրառումը, պաշտոնում առաջ դնելու և զբաղվածության երաշխիքի, մասնագիտական պատրաստություն ստանալու, վերավորակավորվելու և վերապատրաստվելու, հավասար վարձատրության, աշխատանքի որակի գնա-

հատման վերաբերմամբ հավասար մոտեցում), սոցիալական ապահովության (կենսաթոշակի անցնելու, գործազրկության, հիվանդության, հաշմանդամության դեպքում, ծերության և աշխատունակության կորստի դեպքերում), առողջության պահպանության (իրագործվի անհրաժեշտ լրացուցիչ սոցիալական ծառայություններ՝ մասնավորապես ընդլայնվի երեխաների խնամքով զբաղվող հիմնարկների ցանցը, մշակել սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների կանխարգելման ծրագրեր, քանի որ 1999թ-ի դրությամբ «Գյումրու Մաշկա-Վեներական դիսպանսեր» ՊՓԲԸ-ում ամբուլատոր բուժում են ստացել 2900 մարդ, ստացիոնար բուժում՝ 171 մարդ, որից 92-ը՝ կին), ընտանեկան նպաստների փոխառությունների, անշարժ գույքի դիմաց դրամական վարկառություններ և այլ տեսակների ֆինանսական վարկեր ստանալու, հանգստի հետ կապված միջոցառումներին, սպորտի և մշակութային կյանքի բնագավառներում պարապմունքներին մասնակցելու իրավահավասարություններում:

5. գյուղական շրջաններում կանանց նկատմամբ խտրականությունը վերացնելու ուղղությամբ նրանց մասնակից դարձնել բոլոր մակարդակներում զարգացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, որպեսզի օգտվեն կյանքի պատշաճ պայմաններից,

6. ամուսնաընտանեկան հարաբերություններում (ամուսնու ազատ ընտրության և միայն իր ազատ և լիակատար համաձայնությամբ ամուսնանալու միատեսակ իրավունքներ, ամուսնու և կնոջ հավասար անձնական իրավունքներ, այդ թվում ազգանվան, մասնագիտության և զբաղմունքի ընտրության իրավունք, երեխայի նշանադրության իրավունքի և ամուսնության ժամանակ հավասար իրավունքներ):

7. Կազմակերպված կյոք սեղանի եվ սեմինարի արդյունքների ամփոփում. առաջարկներ

Ամբողջ Հայաստանում, պայմանավորված ժամանակակից տնտեսական, հասարակական և քաղաքական զարգացումներով, կանանց դիրքի և դերի փոփոխությունը լուրջ ուսումնասիրության ու վերլուծության կարիք ունի: Մասնավորապես Գյումրիում այդ հարցերին ավելանում են նաև հետադեպյան ժամանակաշրջանին բնորոշ տնտեսական, հոգեբանական և այլ բնույթի խնդիրներ: Եվ ստացվում է այն պատկերը, որը ներկայացվեց սոցիոլոգիական Հարցման արդյունքների քննարկման ժամանակ: Քննարկման աշխատանքներին, բացի աշխատանքային խմբից, մասնակցեցին պետական կառույցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (կից՝ ներկայացվում է ցուցակը):

Առաջադիր նպատակների իրականացման ճիշտ քաղաքականություն մշակելու, համապատասխան ինֆորմացիայի ստացման, փոխանակման ու քննարկման համար մասնակիցների կողմից սոցիոլոգիական Հարցման անցկացումը համարվեց ընդունելի ու արդյունավետ տարբերակ: Իսկ արդյունքները շահագրգիռ բանավեճի, կարծիքների արտահայտման առիթ հանդիսացան: Համաձայնելով Հարցման տվյալների համադրման արդյունքում ստացված ուշագրավ փաստերի հետ՝ մասնակիցները նույնպես նշեցին, որ այսօր կինը Գյումրիում լուրջ աջակցության կարիք ունի: Առկա սոցիալական դժվարությունների, գրեթե անհույս ու անպաշտպան վիճակի պատճառով կանանց մի մասն այսօր արդեն շքեղություն է համարում վարսահարդարի, դիմահարդարի կամ բժիշկ-կոսմետոլոգի ծառայություններից օգտվելը: Ընդ որում, որպես դրա հիմնական պատճառ նրանք նշել են ֆինանսական ծանր վիճակը: Իսկ երբ սրան ավելանում է նաև կանանց կողմից ընտանիքի նվազագույն նյութական վիճակի ապահովումը, ոչ ավանդական (ծանր ֆիզիկական) աշխատանքով զբաղվելը, կամ, որ ավելի վատ է, գործազրկությունը, ապա պարզ է դառնում, թե ինչու է պայմանավորված Գյումրիում կանանց վաղաժամ ծերացումը:

Թերևս, դրանք են հանդիսանում նաև սոցիալական ու ազգային մեկ այլ չարիքի՝ արտագաղթի

պատճառը, որն այսօր ահազնացող չափերի է հասել: Անհանգստացնող է այն փաստը, որ «Ի՞նչ եք սպասում ապագայից» հարցին 42.8% պատասխանել է՝ վատը:

Շիրակի մարզում, մասնավորապես Գյումրիում, սոցիալական խոցելի խմբերի պրոբլեմները լուրջ և հետևողական ուսումնասիրման կարիք ունեն: Դա ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ չլուծված հիմնախնդիրները, որպես չարորակ նորագոյացության մետաստազներ, կարծրանում են և իրենց շոշափուկների մեջ են առնում մեր կյանքի նոր ոլորտներ ու հասարակական խմբեր: Այդ խմբերից առանձնանում են հատկապես կանայք, քանի որ հայկական իրականության մեջ կինն առանձնահատուկ դեր ունի և համապատասխան վերաբերմունքի է արժանացած:

Այսօր, պայմանավորված կնոջ ծանր վիճակով, կրկնակի խոցելի խումբ են դարձել նաև սղամարդիկ: Սրանով պայմանավորված՝ կնոջ պրոբլեմների քննարկումը, լուծման ուղիների ճշգրտումն օրախնդիր հարց է դարձել: Այդ նպատակն ունեն Գյումրիում կատարված սոցիոլոգիական հետազոտությունը, որի արդյունքներն ամփոփվեցին վերջնական գեկույց-սեմինարի աշխատանքներում (կից ներկայացվում է մասնակիցների ցուցակը):

- Ընդհանուր վիճակն ինչքան էլ ծանր, այնուամենայնիվ, անհույս չէ և հնարավոր է մեղմել ստեղծված սոցիալական լարվածությունը: Ինչպես հետազոտությունն անցկացրած աշխատակազմի գեկույցներում, այնպես էլ՝ ելույթներում, ելնելով ներկայացված փաստերի համադրումից, կատարվեցին մի շարք ուշագրավ դիտողություններ, առաջարկություններ, որոնց հաշվառումը և իրականացումը պատկան ատյանների կողմից զգալիորեն կմեղմի սոցիալական լարվածությունը: Դրանցից առանձնանում են հետևյալները.
- ստեղծել կանանց հիմնախնդիրները լուսաբանող և նրանց հասարակական ակտիվությունը բարձրացնող հեռուստահաղորդաչափեր,
- հրատարակել և տարածել խորհրդատվական տարբեր ձեռնարկներ,
- ստեղծել խորհրդատվական և աջակցող կենտրոններ,

- Հաշվի առնելով կանանց ավանդապահական մոտեցումները, սթրեսային իրավիճակը և այլ հանգամանքներ՝ ստեղծել «Վստահություն հեռախոս» ծառայություն,
- Հիմք ընդունելով ծրագրի իրականացման և վերջնական գեկույցի քննարկման ընթացքում կանանց չափազանց ակտիվ մասնակցությունը քննարկմանը և բանավեճերին՝ անհրաժեշտություն կա ստեղծել նախասիրական և բանավիճային ակումբներ, որն անհամեմատ կբարձրացնի կանանց ակտիվությունը և կնպաստի ընդգրկվելու Հասարակական կազմակերպությունների աշխատանքներում,
- նպաստել կանանց՝ նոր, ժամանակակից մասնագիտություններ ձեռք բերելու գործընթացին՝ հաշվի առնելով հարցվողների հետաքրքրությունները, առաջարկությունները (համակարգչային գործ, օտար լեզուների, հաշվապահական գործի ուսուցում և այլն),
- կազմակերպել ֆայթալված տնակային տնտեսություններում բնակվող սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքների, միայնակ կանանց, միայնակ ծեբերի, այրիների և այլ սոցիալական խմբերի տնակների վերանորոգում: Կազմակերպել ձմռան նախապատրաստական աշխատանքներ նշված խմբերի համար՝ «Տաք ձմեռ» ծրագիր,
- օգնության հումանիտար ծրագրերից անցնել զարգացման ծրագրերի,
- կազմել կանանց պրոբլեմների լուծմանն ուղղված համայնք ծրագիր, իսկ այդ լուծումներն իրականացնել նեղ (լոկալ) ձևով (կրթական, առողջապահական և այլ բնագավառներում),
- պետական մակարդակով առաջնային ուշադրություն դարձնել կանանց մենտալ և հոգեկան առողջության հարցերով,
- ստեղծել դրական մայրություն զարգացնող ծրագրեր, տալ մորը համապատասխան գիտելիքներ,

- ստեղծել մասնագիտություն ունեցող գործազուրկների որակավորումը բարձրացնող ծրագրեր,
- ստեղծել նոր շուկա շնորհալի հայ կնոջ համար և հնարավորություն տալ նրան աշխատել տանը, այդ նպատակով կազմակերպել նրանց աշխատանքների ցուցահանդես-վաճառք,
- ստեղծել նախաձեռնող, սատարող, պահանջող խումբ, որը կհետևի համապատասխան կառույցների կողմից առաջադիր խնդիրների լուծման աշխատանքներին,
- դպրոցներում հատկացնել սեռական դաստիարակության հատուկ դասաժամեր, ուսումնասիրել դպրոցականների կարծիքը և հետաքրքրություններն այս ուղղությամբ:

Կարելի է եզրակացնել, որ կնոջ դերի բարձրացումը ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակում և երկրի բնականոն, ժողովրդավարական զարգացման խնդրում անգնահատելի է, եթե ի վիճակի լինենք կյանքի կոչել և իրագործել նրանց կանացի նախասկիզբը վերականգնող իրատեսական ծրագրեր:

Անհրաժեշտ է նաև նշել, որ կինն իրեն միայն հատուկ իմաստությամբ, կանացի հմայքով, գեղեցիկի բնատուր զգացողությամբ, ակտիվությամբ, մանկածնության գենետիկ բնագրով կարող է կառուցողական դրդիչ հանդիսանալ տղամարդու համար՝ դառնալով նրա լավագույն տնտեսական և սոցիալական հենարանը, որն ի նպաստ կղբվի հասարակության զարգացման հանգուցային խնդիրներին:

Ժամանակակից պայմաններում գենդերային հիմնախնդիրներով պետք է զբաղվեն ոչ միայն կանայք, այլև՝ տղամարդիկ՝ նպատակ ունենալով կյանքի կոչելու ՀՀ սահմանադրական դրույթը տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների ամրագրման մասին:

8. Ամփոփում

«Կանանց դիրքը և դերը հայկական հասարակությունում» ծրագրի շրջանակներում անցկացված սոցիոլոգիական հարցումը և դրա արդյունքների վերլուծությունը վերջնական զեկույցի սահմաններում հայտածեցին մի շարք կարևոր հիմնախնդիրների վերհանման, դրանց լուծմանը նպաստող հասցադրումների հիմնավորման, լուծումների հնարավոր տարբերակների առաջադրման անհրաժեշտությունը:

Տարափոխիող հասարակություններում կնոջ դերի բարձրացումը, հետամբողջատիրական բոլոր բարդությունների (տնտեսական, սոցիալական և հոգեբանական) հաղթահարումը, ուղղակիորեն առնչվում են կնոջ ստեղծարար նախասկզբին ու կենսունակությունը: Սոցիալական հարցումները ցույց են տալիս, որ հայ ի մասնավորի, գյուղերից կինը, չնայած ծանր սոցիալ-հոգեբանական վիճակի դժվարություններին, կարողացել է պահպանել լավատեսություն որոշակի մասնաբաժին (կորցրել է բազմաթիվ նյութական ու հոգևոր բարիքներ), բայց ևս այս սուր կարիք ունի որոշակի հոգածություն կամ էլ մասնագիտական խորհրդատվություն: Հարկ է նշել, որ հարցվողների զգալի հատվածը պատրաստակամություն է հայտնել ձեռք բերել նոր մասնագիտություն և պատրաստ է նույնիսկ վերապրոֆիլավորվել՝ հանուն իր ընտանիքի բարօրություն: Ավանդապահ համարվող հայ կինը, ցանկություն ունի իրական, գործուն մասնակցություն ունենալ հասարակական, տնտեսական և այլ ոլորտներին, նա ձգտում է իրական իրավահավասարություն: Հայուհին պահանջ ունի ժամանակակից քաղաքակրթական բազմաթիվ նվաճումներին հարողակցման, սակայն մոր՝ ընտանիքի հիմնական կրող հեծանի, ամենահաս ու «ամենակարող» ծնողի

ֆունկցիան, նրան խանգարում և նույնիսկ արգելանք են հանդիսանում ոչ միայն անձնական բարեկեցություն, այլև անձնական հիգիենայի, արտաքին տեսքի և նորմալ կնոջ համար այլ զբաղմունքների բնականոն իրագործման ճանապարհին:

Հայ կնոջ՝ աղջկա, սեռական բնականոն և ժամանակակից դաստիարակության ու լուսավորության խնդրում ևս հայտածվեցին բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնք ևս կարելի է մեղմել ճշգրիտ և դրագետ մոտեցման դեպքում միայն:

Արձարծված հիմնական թեմաների պատասխաններն ընկած են մակերեսին, չեն պարունակում մեծ ներդրումային ոլորտներ, սակայն միևնույն ժամանակ պետական, հասարակական, օտարերկրյա ոչ մեծ, բայց շոշափելի ներդրման ու բարոյական աջակցության կարիքն ունեն:

Ծրագրի իրականացման ներկա փուլը փաստեց նաև հարցվողների չափազանց մեծ ակտիվությունն ու շահագրգիռ մոտեցումները նմանատիպ հետազոտությունների անցկացման ու դրանցից ակնկալիող գործնական օգուտների անհրաժեշտություն հարցում:

Ծրագիրն ամփոփող միջանկյալ և վերջնական զեկույցների քննարկումների ու սեմինարի արդյունքում արձարծված առաջարկությունների փաթեթը կղրվի շահագրգիռ քննարկման ոլորտ՝ ավելի ուշ, երբ կհաստակեցվեն հիմնախնդիրների ամենահրատապ լուծման ուղիները, մեթոդները և ռազմավարությունը:

9. Ծրագրի իրականացման ընթացքը, մոտեցումներ, դիտարկումներ

9.1. Հարցաշարի կազմման աշխատանքները և ընթացքը

Հարցաշարը կազմելիս ընդգրկվեցին տարբեր մասնագիտական ոլորտներ ներկայացնող մարդիկ (սոցիալական աշխատող, հոգեբան, ազգագրագետ, մանկավարժ, բժիշկ-կոսմետոլոգ, սեքսուալոգ և այլք): Հարցաշարը չձանրաբեռնելու նպատակով ձգտել ենք չընդգրկել այնպիսի հարցեր և ոլորտներ, որոնք ըստ աղբյուրների արդեն ինչ որ չափով ուսումնասիրված են վերջին երկու տարում:

Հարցաթերթիկում ընդգրկվել են այնպիսի հարցեր, որոնք հնարավորություն կտային պարզել.

- պոբլեմների այն հիմնական խումբը, որն առաջնային է Գյումրու կանանց համար,
- ճշտել դրանց լուծմանը նպաստող աշխատանքների բովանդակությունը և ուղղվածությունը,
- կանանց դերային ֆունկցիաների փոփոխման, ոչ ավանդական աշխատանքով զբաղվելու, իրավահավասարության վերաբերյալ իրենց իսկ՝ կանանց վերաբերմունքը,
- կանանց ներկա սոցիալական վիճակը, դերային և արժեքային կողմնորոշումները և նախապրությունները,
- կանանց սոցիալ-հոգեբանական տիպային խմբերը:

Հարցաթերթիկում նախատեսված էր նաև հատուկ առանձնացված հատված հարցվողի առաջարկությունների, դիտողությունների և կարծիքների գրանցման համար, որը հետագայում բավականաչափ լրացուցիչ տեղեկություններ տվեց և օգտակար դարձավ հետագա վերլուծության համար:

Հարցաթերթիկում նախատեսված էր նաև հարցում կատարողի կարծիքի լրացուցիչ դիտարկումների բաժին: Այստեղ նշումներ են կատարվել հարցաշարի և ընդհանրապես տվյալ հարցման վերաբերյալ հարցվողների վերաբերմունքի, նրանց պատասխանների անկեղծության, ակտիվության և

հարակից այլ փաստեր, որոնք ևս լրացուցիչ ու հետաքրքիր տեղեկություններ են պարունակում:

9.2. Հարցումն իրականացնող խմբի կազմավորում և Գախապատրաստում

Հարցումն անցկացնող խմբում ընդգրկվեցին համապատասխան փորձ ունեցող մասնագետներ, ինչպես նաև ՄԻ-ի բարձր կուրսի ուսանողուհիներ, որոնք մասնագիտացվում են սոցիալական աշխատանքներում: Համոզված ենք, որ այս հարցումը նրանց կօգնի պրակտիկ փորձ ձեռք բերել և հմտանալ իրենց մասնագիտության մեջ, միևնույն ժամանակ նպատակ ունենալ երիտասարդությանը առավել ակտիվ ներգրավել կանանց հուզող հիմնախնդիրներին ծանոթանալու ոլորտ:

Նախնական քննարկումներից զատ, աշխատանքային և հետազոտական խմբերի հետ անցկացվեցին ընթացիկ խորհրդատվություններ, որոնց շնորհիվ, կարծում ենք, հնարավորին առավելագույն չափով ապահովվեց սոցիոլոգիական հարցման օբյեկտիվությունը և ճշգրտությունը (տե՛ս կից ներկայացվող «Հարցնողների նախապատրաստման սխեմա»-ն):

9.3. Հարցումն անցկացնելու Գախապատրաստման մոտեցումներ

Երկրաշարժի հետևանքներով պայմանավորված, Գյումրին ունի կառուցվածքային առանձնահատկություններ.

- նորակառույց թաղամասեր,
- տնակային ավաններ,
- հին՝ ավանդական, թաղամասեր,
- մասնավոր սեկտոր:

Բնականաբար հարցմանն ենթակա տարածքներն ընտրելիս առաջնորդվել ենք այն սկզբունքով, որ հարցվողների շրջանակն ամբողջական ընդգրկում ունենա: Սա է պատճառը, որ քաղաքի ներկա տարածքը բաժանվել է 20 տեղամասերի՝ պահպանելով ընդգրկման համամասնությունը (կից ներկայացնում ենք աշխատանքային քարտեզը):

Համամասնութեան սկզբունքը պահպանվել է նաև Հարցվողների տարիքային սահմանների ընտրության ժամանակ և առանձնացվել են համապատասխան հինգ խմբեր (18-28տ., 29-39տ., 40-50տ., 51-61տ., և 61-ից բարձր):

9.4. Հարցման ընթացքը

Համապատասխան հրահանգավորում ստացած Հարցնողները խտորեն պահպանել են առաջադրված խնդիրները և յուրաքանչյուր օր իրենց գործողությունները հստակեցրել են կոորդինացնող խմբի հետ:

9.5. Հարցվողների վերաբերմունքը կանանց հիմնահարցերին և հարցմանը

Հարցմանը մասնակցելու իրենց պատրաստակամությունը և վերաբերմունքով առանձնանում են նետեյալ հիմնական խմբերը.

- Հարցվողների մեծ մասը գոհունակությամբ է ընդունել տվյալ հետազոտությունը, ողջունել այսպիսի աշխատանքը, Հարցմանը մասնակցել են մեծ պատրաստակամությամբ և սիրով, առանց դժգոհության, տվել են հնարավորին չափ անկեղծ ու հանգամանալից պատասխաններ և ներկայացրել են կոնկրետ կարծիքներ ու առաջարկություններ նպատակային առանձնացված հատվածում, որոնք ավելի շատ տնտեսական և բարոյա-հոգեբանական բնույթի են.

ա) աշխատատեղերի ստեղծում, աշխատավարձի և կենսաթոշակի բարձրացում ու ժամանակին վճարում,

բ) էապես պայմանավորում են նախորդով, ասելով, որ դրանց լուծման դեպքում կանայք կզգան իրենց որպես կին և կլինեն կանացի,

գ) ուրախ են, որ կանանց խնդիրներով հետաքրքրվողներ կան, ցանկանում են աջակցել, դրա իրականացման միջոցներով մեկը համարելով համապատասխան կազմակերպությունների ստեղծումը և ակտիվ գործունեությունը,

դ) կցանկանային, որ ստեղծվեին երիտասարդների համար ժամանցի վայրեր և քաղաքը բարեկարգվեր,

ե) դժգոհ են կենտրոնական և տեղական իշխանության մարմինների աշխատանքից:

- երկրորդ խմբում այն կանայք են, ովքեր բավականին հուսալից են ու հուսալքված, նրանք դժգոհ կամ անտարբեր են եղել Հարցման նկատմամբ, սակայն, այնուամենայնիվ, պատասխանել են բոլոր Հարցերին հիմնականում բավականին անկեղծ՝ չակնկալելով որևէ դրական փոփոխություն,
- Հարցմանը մասնակցելուց հրաժարվողներ ըստ էության գրեթե չեն եղել:

Երկրաչարժից հետո անցած տարիների ընթացքում ստեղծված իրավիճակը, ժողովրդագրական փոփոխությունները նոր Հարցադրումներ են ծնել կանանց դերի, նրանց պաշտպանվածության, իրավահավասարության խնդիրների լուծման քաղաքականության ճշգրտման անհրաժեշտության առումով: Այս իմաստով անցկացված սոցիոլոգիական հարցումը որոշակի հստակեցում կմտցնի վեր հանված խնդիրների ընկալման և լուծման գործում: Այդ են վկայում նաև Հարցվողների կարծիքները.

- թողնել կնոջը մնալ որպես կին և չդառնա փողոցային վաճառական, ստեղծվի այնպիսի պայմաններ, որ կինը մնա որպես կին և զբաղվի իրենով,
- ինչ սկսել եմ աշխատել, զգում եմ, որ որպես կին ինձ հաշվի են առնում,
- կանանց կազմակերպությունները Գյումրիում քիչ են և աշխատանք չեն տանում,
- դադարեցնել Հայ ժողովրդին օգնություններով կերակրելը և ստեղծել աշխատատեղեր,
- պայքարել Հայ ժողովրդի հայրենիքից դուրս գալու դեմ,
- կանանց հարցերով զբաղվող կազմակերպություններից գոնե մեկը պետք է կազմակերպի կանանց հիվանդությունների անվճար բուժումը,

- ցանկանում եմ, որ գլուխները ուշադրություն դարձնեն իրենց պրոբլեմներին և ուժ գտնեն իրենց մեջ պայքարելու դրանց դեմ:

Հարցման ընթացքում կատարված դիտարկումներն ու եզրակացությունները.

Հարցման ընթացքում, կանանց շրջանում զգացվել է իրենց իսկ խնդիրների նկատմամբ մեծ ակտիվություն: Որոշ Հարցերին պատասխանելիս զգացվել է տրված Հարցի Հոգեբանական անմիջական ազդեցությունը. օրինակ՝ կնոջ արտաքին տեսքին վերաբերվող Հարցերին պատասխանելիս, Հարցվողն ակամա շտկել է Հագուստը կամ էլ մազերը, հրեմն էլ «արդարացումներ» են փնտրել տվյալ պահին իրենց արտաքին տեսքի համար: Ակնհայտ զգացվել են նաև կանացի Հպարտության դրսևորումներ նմանատիպ Հարցերին պատասխանելիս:

Հարցվողների մոտ զգացվել է պրոբլեմների մասին խոսելու ցանկություն, որն արտահայտվել է Հարցումից հետո Հարցնողի հետ զանազան խնդիրների շուրջ զրուցելու, բանավիճելու և կիսվելու ակնհայտ ձգտմամբ՝ նախափրկությունների կամ իրենց հուզող որոշակի Հարցերի շրջանակներում:

Քննադատաբար մոտենալով և անհարիր համարելով մարմնավաճառությունը հայ ժողովրդի համար, առաջարկություններ են արվել պայքարել նման երևույթները կանխելու, ինչպես նաև վեներական և ձեռքբերովի այլ վտանգավոր Հիվանդությունների դեմ:

Համոզված կարելի է եզրակացնել, որ նմանատիպ Հարցումները կարող են լրացուցիչ ազդակ հանդիսանալ կանանց Հասարակական ակտիվացման համար և նրանց հիմնախնդիրների վրա ուշադրություն հրավիրելու լավագույն տարբերակներից մեկն է:

9.6. Սոցիալական հարցման արդյունքների ամփոփումը

Հարցման արդյունքներն ամփոփվել են ըստ Համապատասխան Հարցերի պատասխանների, իսկ բաց Հարցերը խմբավորվել են միմյանց հետ առնչվող հնարավոր տարբերակներով: Արդյունքներն ամփոփող խումբը նպատակ ունենալով պարզել Հարցերին տրված պատասխանների առանձնահատ-

կությունները, դասակարգել է դրանք ըստ որոշակի սանդղակների և ցենզի: Սոցիոլոգիական Հարցման պատկերն առավել հստակ ներկայացնելու և ամփոփիչ վերլուծություն կատարելու նպատակով՝ Հարցերը համադրվել են ըստ ներքոհիշյալ ոլորտների.

- ըստ տարիքային խմբերի,
- ըստ կրթական ցենզի,
- ըստ աշխատանքային կարգավիճակի,
- ըստ աշխատանքային բնագավառների տարբերակման,
- ըստ գործազուրկների տված պատասխանների,
- ըստ ամառանական կարգավիճակի,
- ըստ իրազեկության աղբյուրի:

Միաժամանակ Հարցման արդյունքներն ավելի հասանելի և ընկալելի դարձնելու համար, տվյալներն արտահայտվել են դիտողական 60 աղյուսակի և 34 դիագրամայի տեսքով:

Արդյունքները ներկայացվել են մասնագիտական տարբեր շահագրգիռ խմբերի քննարկմանը, որից հետո հրավիրվել է լայն ընդգրկում ունեցող Կլոր սեղան (միջոցառման մասնակիցների ցանկը ներկայացվում է ստորև) առկա նյութերի քննարկման, կանանց սոցիալ-հոգեբանական պրոբլեմների բացահայտման և հետագա գործողությունների ռազմավարության և ուղղությունների մշակման նպատակով:

10. Հավելվածներ

Աղյուսակներ

Աղյուսակ 1 - Դերային կողմնորոշումներն՝ ըստ տարիքի (հարց 6)	36
Աղյուսակ 2 - Արժեքային կողմնորոշումներն՝ ըստ տարիքի (հարց 8).....	36
Աղյուսակ 3 - Նախընտրելի հեռուստաժրագրերն՝ ըստ տարիքային խմբերի (հարց 9) /պատասխանները՝ տոկոսներով/	37
Աղյուսակ 4 - Օրվա ընթացքում հարդարմանը հատկացված ժամանակը՝ ըստ տարիքի (հարց 12).....	37
Աղյուսակ 5 - «Օգտվում եք բժիշկ- կոսմետոլոգի ծառայություններից» հարցի պատասխանները՝ ըստ տարիքի (հարց 13)	38
Աղյուսակ 6 - Բժիշկ - կոսմետոլոգի ծառայություններից օգտվելու հաճախականությունը՝ ըստ տարիքի (հարց 14).....	38
Աղյուսակ 7- Բժիշկ - կոսմետոլոգի ծառայություններից չօգտվելու պատճառաբանություններն՝ ըստ տարիքի (հարց 1).....	39
Աղյուսակ 8 - «Դիմում եք արդյոք վարսահարդարի, դիմահարդարի ծառայություններին» հարցի պատասխաններն՝ ըստ տարիքի (հարց 16).....	39
Աղյուսակ 9 - Վարսահարդարի, դիմահարդարի ծառայություններից օգտվելու հաճախականությունը՝ ըստ տարիքի (հարց 17).....	40
Աղյուսակ 10 - Վարսահարդարի, դիմահարդարի ծառայություններից չօգտվողների պատճառաբանություններն՝ ըստ տարիքի (հարց 18).....	40
Աղյուսակ 11 - Սեռական կյանքից իրազեկության աստիճանն ու աղբյուրները՝ ըստ տարիքի (հարցեր 19, 20)	41
Աղյուսակ 12 - «Ձեր կարծիքով ինչ տարիքում պետք է ամուսնանա աղջիկը» հարցի պատասխաններն ըստ տարիքի (հարց 21)	41
Աղյուսակ 13 - «Ծանոթության ի՞նչ ժամանակահատված է նախընտրելի մինչև ամուսնությունը» հարցի պատասխաններն՝ ըստ տարիքի (հարց 22).....	42
Աղյուսակ 14 - «Մտերմության ի՞նչ աստիճան է նախընտրելի մինչև ամուսնությունը» հարցի պատասխանները՝ ըստ տարիքի (հարց 23).....	42
Աղյուսակ 15 - «Ըստ Ձեզ նորաստեղծ ընտանիքը պետք է ապրի...» հարցի պատասխաններն՝ ըստ տարիքի (հարց 24)	42
Աղյուսակ 16 - «Ընտանիքում ո՞վ պետք է զբաղվի երեխաների դաստիարակությամբ» հարցի պատասխաններն՝ ըստ տարիքի (հարց 25).....	43
Աղյուսակ 17 - «Ո՞վ պետք է զբաղվի ընտանիքի նյութական ապահովման հարցերով» հարցի պատասխաններն՝ ըստ տարիքի (հարց 26).....	43
Աղյուսակ 18 - «Ո՞վ պետք է տնօրինի ընտանեկան ֆինանսները» հարցի պատասխաններն՝ ըստ տարիքի (հարց 27).....	43
Աղյուսակ 19 - Աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը՝ ըստ տարիքի (հարց 28)	44
Աղյուսակ 20 - «Ինչպե՞ս եք վերաբերվում կնոջ՝ ոչ ավանդական աշխատանքով զբաղվելուն» հարցի պատասխաններն՝ ըստ տարիքի (հարց 29).....	44
Աղյուսակ 21 - «Ինչպե՞ս եք վերաբերվում հասարակության մեջ կնոջ և տղամարդու իրավունքների հավասարությանը» հարցի պատասխաններն՝ ըստ տարիքի (հարց 31)	44
Աղյուսակ 22 - Նոր մասնագիտություն ձեռք բերելու պատրաստակամությունը՝ ըստ տարիքի (հարց 47)	45
Աղյուսակ 23 - Նոր մասնագիտություն ստանալու պատրաստակամության վերաբերյալ դրական պատասխաններն՝ ըստ տարիքային խմբերի (հարց 47)	45
Աղյուսակ 24 - Նոր մասնագիտություն ստանալու պատրաստակամության վերաբերյալ բացասական պատասխանների պատճառաբանություններն՝ ըստ տարիքային խմբերի (հարց 48).....	46
Աղյուսակ 25 - Հիմնական պրոբլեմը՝ ըստ տարիքի (հարց 49).....	47
Աղյուսակ 26 - «Ունե՞լ կամ ինչի հետ եք կապում Ձեր հիմնական պրոբլեմի լուծումը» հարցի պատասխաններն՝ ըստ տարիքի (հարց 50).....	48
Աղյուսակ 27 - Սպասումներն ապագայից՝ ըստ տարիքի (հարց 58)	48
Աղյուսակ 28 - Արժեքային կողմնորոշումներն՝ ըստ աշխատանքային կարգավիճակի (հարց 8)	49
Աղյուսակ 29 - Աշխատանքի նկատմամբ վերաբերմունքն՝ ըստ աշխատանքային կարգավիճակի (հարց 28).....	49
Աղյուսակ 30 - Գործազուրկներն ու աշխատողներն՝ ըստ աշխատանքային բնագավառների տարբերակման (հարց 39).....	50
